




891.99

2-30





12 MAR 2011



ՀԱՆՍԱԳԻՐ ԱՅԳԵՏԻ
ՄԱՀԱԳԻՐ ԹԳԻՄԻ



1935-1936 թ.

36.833

08 MAY 2013



36319. 62

Ա. ԲԱԿԻՆՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ



Առաջաց բռնքս Ե. Կրթալի
Երզնգն է սուրբ և պանծալի
Րաբունեաց ըաբուն բարի
Որոյ Վարդան վերայ կոչի:

Ա.

Վայ ինձ, ուլ իմ վորդիներ, վոր աշխարհ պիտի դաք ինձնից հետո, վորովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և չեմ կարող, քանի վոր գերեզմանի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն այս զրքով կխոսեմ ձեզ հետ մինչև հինգ և մինչև յոթ սերունդ և հոգով կը մնամ ձեր մեջ», — այսպես ավանդել է Վարդան Այգեցին, մի վանական, վոր հեղինակել է բազմաթիվ առակախառն թարգմանքներ և վորի անունով են կոչել միջնադարյան հայ առակների և մանրավեպերի ձեռագիր ժողովածուները, մերթ անվանելով «Գիրք առակաց ասացեալ վարդապետին Վարդանայի պէտս հոգւո և մարմնոյ պիտանի», մերթ՝ «Վարդան Այգեցի վարդապետի ասացեալ» և մերթ՝ «Վարդանգիրք»:

Այս և այլ այսպիսի վերնագրերով հայտնի ձեռագրերը մինչև XVII դարն անընդհատ փոփոխվել են և ասպաբարացել՝ յերբ Ամստերդամում 1668 թվին տպագրվել է հայ առակների առաջին ժողովածուն՝ «Գիրք աշխարհաց և

առասպելաբանութեանց, որ է Աղուէսազիրը՝ վերնա-
գրով:

Ո՞վ եր Վարդան Այգեկցին կամ Այգեցին, վորին հե-
տորդները տարբերելու համար XIII դարու մյուս Վար-
դաններէից, անվանել են Մեծ Վարդան: Դժբախտաբար շատ
թերի յեն տեղեկութիւնները նրա կյանքի և գործունեյու-
թեան մասին և այն, ինչ վոր հայտնի յե, մեծ մասամբ քաղ-
ված ե նրա քաղոցներէից և թղթերից:

Ստույգ հայտնի չե նրա ծննդւան թվականը: Հիշատա-
կարանների մեջ այն ժամանակ սովորութիւնն չեր նշանակել
ծննդւան թվականը: Իր քաղոցների մեջ մի քանի անգամ
նա հիշատակում ե իր ծննդավայրը՝ Մարաթը կամ Մարա-
թոն, վոր Հայեպի մերձակա մի ավան եր և եր այն ժա-
մանակի սիրիական հայ գաղութներէից մեկը: Ուրեմն, յեթե
ծննդավայրի անունով կոչելու լինենք Վարդանին, ապա
նրան պետք ե անվանել Վարդան Մարաթեցի («Վարդան...
որ ի Մարաթա», ինչպես ինքն ե գրել) Սակախ հայտնի
փաստ ե, վոր հաճախ վանականներն իրենց կոչում եյին
վոչ թե ծննդավայրի, այլ այն վանքի կամ մենաստանե-
րին կից դպրոցի անունով, վորտեղ նրանք հռչակվել եյին:
Այդ ձևով ել Մարաթեցին հռչակվում ե Այգեկցի կամ Այ-
գեցի: Ի հիշատակ այն անսպասելի, ուր քաջվում ե նա և
ապրում մինչև մահ:

Վարդանը Մարաթից տեղափոխվում ե Կիլիկիայի Ար-
քակաղնի վանքը, վոր աթոռանիստ վայր եր և նշանա-
վոր եր իր դպրոցով, վորտեղ հենց այդ ժամանակ բոլոր-
վել եր պայքարը Արևմուտքի և Արեւելքի կողմնակիցների
միջև: Հղարանում եր Ռուբինյան հարստութիւնը Կիլիկի-
այում: Քաղաքները ծաղկում եյին. արևմուտքից քաղաքից

վաճառականներ արտահանում և ներմուծում եյին հարուստ
ապրանքներ: Քաղաքները ճոխ վաճառանոցներ եյին և շա-
հաստաններ: Առևտրի հետ ծաղկում եր պերճութիւնը
և շոտայութիւնը մի կողմից, մյուս կողմից տնտեսները և
աղքատները կազմում եյին այնպիսի թիվ, վորոնց վոտ-
նահարվող իրավունքների պաշտպանութեան մասին խոսում
ե հենց ինքը Վարդանը: Քաղաքների հարստացման հետ
միասին փոխվում եյին նաև Կիլիկիայի հայերի, առաջին
չերթին վաճառականների, բարքերը և լեզու: Այսպես
կոչված արևելցիների պայքարն ընդդէմ արևմուտքից յե-
ող հոսանքի, դասային շահերի քաղաքական պաշտպա-
նութիւնից բացի, նպատակ ուներ նաև անաղարտ պահել
հայ լեզուն և հայ յեկեղեցին, վորի հիմքերը խաբուում
եյին հենց այդ վաճառականները:

Արքակաղնի վանքում ուսանելուց հետո Վարդան իր-
րե քաղոցիչ հաստատվում ե Կիլիկիայի Դուլի քաղաքում:
Նրա արտասանած քաղոցները վկայում են, վոր Մարաթե-
ցին հարել ե արևելցիների բանակին, այսինքն նրանց.
վորոնք իղուր ջանում եյին պատվար կանգնել նոր հոսան-
քի դէմ: Այսպես Վարդանը յեկեղեցու բնակից հանդիմանում
ե քաղաքում ապրող կանանց, վորոնք «սիրում են գուգվել
և զարդարել աչքերը և յերեսը զանազան դեղերով ի գայ-
թակցութիւն պատանիների»: Նա խոսում ե այն կանանց
մասին, վորոնք «չար դեղերով իրենց գրկում են ծնելու
կարողութիւնից և այդ սովորեցնում են նաև ուրիշներին»:
Նա դժոխքի դատաստանով ե սպառնում նրանց, վորոնք
շահով դրամ են տալիս, գրկում են տնտեսին և մշակին,
խաբում են կշեռքի մեջ, կաթի մեջ ջուր են խառնում և
առհասարակ խարդախ մարդիկ են: Նրան իբրեւ խոստո-

վանահոր, Դրուկի բնակիչները համայնորեն դադարեցին պատ-
մել են նաև ավելի ծանր մեղքեր, Յեւլ տարիներ հետո այդ
մասին ե ակնարկում Վարդանը՝ անապատի մեջ հիշելով
վաղեմի Դրուկը. «Յես, ով իմ վորդիներ, մանկությունից
մինչև ծերություն շրջեցի աշխարհքում և տեսա բազմա-
թիվ մեղքեր և ավելի շատ դադարեցրաք յսեցի»:

Դրուկում հրան հալածում են: Արդյոք նրանք եյին հա-
լածում, վորոնց յուր քարոզներով խարաղանում եր Վար-
դանը, թե կար այլ պատճառ. այդ մասին վոչինչ չի
ավանդում վոչ ինքը և վոչ մի այլ ժամանակակից: Նա
միայն դառնությամբ գրում ե. «Վա՛յ նրան, ում իշխան և
կամ առաջնորդ կկարգեն այս չար և դաժան ժամանակ»:

Ապաստանելով Ամիթ քաղաքում և այնտեղ ևս խաղա-
ղություն չգտնելով, Վարդանը վորոշում ե թողնել «աշ-
խարհը» և անապատ քաշվել: Կիլիկյան հայ իշխան Պաղ-
տինի ոժանդակությամբ նա հեռանում ե Սև լեռան կողմե-
րը՝ Մնտիոբի մոտ, վորտեղ ապրում եյին քրձագեցատ և
մեհակյաց անապատականները: Նա տեղավորվում ե Այգեկ
կամ Այգի կոչված վայրում և այնտեղից ել մնում ե Այգեկի-
ցի կամ Այգեցի կոչումը: Համանական ե, վոր այդ Այգեկը
մի վանք եր և այգի՝ մրգաբեր ծառերով, վոր մշակել եյին
հե՞ց իրենք անապատականները:

Պաղտին իշխանին ուղղած թղթի մեջ՝ Այգեցին իր
մասին հետևյալն ե գրում. «Յեւ վոստորմեկի Վարդանս
գիտուններից տգետս... այս տառերը գրեցի Պաղտին իշ-
խանի խնդրով... վորովհետև մեր բնիկ ժառանգությունից
հալածական յեղանք և յեկանք Այգեկ... և հայոց թվականն
եր ՈՎԱ (1212) և հայոց թաղավորն եր Լևոնն՝ Ռուբին-
յանց Կիլիկիայում»:

Սակայն անապատում ևս հա խաղաղություն չի գըտ-
նում: «Դրուկից յեկանք Այգեկի սուրբ ուխտը, — գրում ե
Վարդանը, — և յերեք տարի անց յերկու անգամ պատա-
հեց, վոր յես և ուխտի յերկու գլխավոր յեղբայրներ հստե-
ցինք և բամբասեցինք վանահորը և հրա բարեկամին»:
Բայց այդ հասարակ բամբասանք չեր, վորով անապատա-
կանները փարատում եյին իրենց ձանձրութիւնը: Այդ պայ-
քաբ եր ուղղված վանահոր, ավելի ճիշտ Այգեկում տի-
րող բարբերի դեմ: Բանն այն ե, վոր անապատականներն
ապրում եյին փառթամ կյանքով, ունեյին այգի և արտ և
ճգնելու փոխարեն գիշերն աղաղակներով փախցնում եյին
վայրի գաղաններին և ցերեկը պարսաքաբ եյին արձակում
թռչուններին վրա, վորպես զի պաշտպանեն պտուղները և
խաղողի վողկույզները: «Յեւ այս ամենի վրա ավելանում
ե մեծագույն կորուստ, վորովհետև վեճը և կռիվը, նախան-
ձը և մախանքը չի պակասում, սա իմ ե և այն քմնն ե
(ասում են անապատականները): Յեւ այն ժամանակ այդ
մենակյացի կյանք չե, այլ աշխարհականի»: Ինքը Վարդա-
նը գլխավորում ե պայքարն այդ բարբերի դեմ: «Յերկու
տարի յե, վոր սատանան մեր մեջ նախանձ սերմանեց և
վեճ և աղաղակ մրգաբեր ծառերի համար, Յեւ մենք մեծ
պատերազմի և տրամության մեջ եյինք այս յերկու տարին
և չկարողացանք յելը գտնել»: Բայց «յեւրը» գտնում են և
համանորեն ինքը Վարդանն ե ցույց տալիս յելը: Մի կի-
րակի անապատականները հավաքվում են և տապարներն
առնելով կարատում են մրգաբեր ծառերը՝ գժտության աղ-
բյուր թգենիները և ընկուզենիները, սերկեյիլի և արբա-
կաղնի ծառերը: «Յեւ յես մեղավորս քաջաւերում եյի իմ
յեղբայրներին, թե մի յերկնչեք, վորովհետև այս վարձք

ե և վոչ դատապարտություն, պարծանք ե անապատիս և վոչ նախատինք».

1220 թվին Վարդան Այգեցին հայտնվում է Դրազարկի վանքում, Այգետեղ ե գրել նա յուր առակը՝ «Վասն տառն վաճառականաց, վոր են մարդիկ» և առակի մեկնությունը, Այգ մասին ինքը հետևյալն է պատմում. «Յես, վորդորմելի Վարդան Մարաթեցիս, այս մենավոր խուցի մեջ, աստվածաբնակ ուխտի սահմաններում, վոր կոչվում է Դրազարկ, կամեցա տասը առակավոր բանով ձեռնել վաճառականներին և այն ութ վորոգայթը, վոր կա նրանց առաջ... Յեվ շատ որեր աշխատեցի և բազում անգամ սկսեցի և չհաջողվեց և սրտմելով վարանեցի և ստույգ իմացա, վոր իմ բազմաթիվ անորենությունները խափսրեցրին իմ միտքը և փակեցին իմ շրթունքները և կապեցին լեզուս...».

Բայց և այնպես ավարտում է յուր աշխատությունը, վոր ուղղված է վոխակալության, յեղվագարության, վորովայնամոլության, զրկանքի, շնություն, կախարդության և անզղջության դեմ.

Այգեցու մահվան թվականը հայտնի չէ, նա հիշատակում է «խուժադուժ և անձանոթ ազգի» մուտքը Հայաստան. Խորքը վերաբերում է մոնղոլներին, վորոնք Հայաստան մտան 1220-ի սկզբներին, ինքն իր մասին գրում է. վոր «ծերությունը և յերկարատև ցավերը կուրացրին իմ միտքը և իմ աչքերը», Յեթե ընդունենք, վոր նա իրոք ապրել է մինչև «գառանցյալ և գարշելի» ալեվորությունը, ինչպես ինքն է գրում, ապա ուրեմն հիմք կա ասելու, վոր նա 1220-ական թվականներին չի մեռել, այլ ավելի ուշ, Ըստ Ն. Մուրի՝ Այգեցին XIII դարի 10 ական թվականներին դեռ ապրում եր.

Յեվ մինչև խորին ծերություն Այգեցին խրատել է և բարոյախոսել, մարտնչել և խաղաղանել՝ յերբեմն յեկեղեցիներում, յերբեմն քաղաքի հրապարակներում և յերբեմն առաքելով թղթեր և առակախառն քաղոցներ, միտ դնելով այն, վոր «անպետք կայծքաբլ և աննշան յերկաթը պարգեվում են հուր՝ ի սպաս մարդկային կյանքի».

Բ

Մեղանում Վարդան Այգեցին առաջինը չէ, վոր հորինել է առակներ, Նրանից առաջ արդեն հայտնի յեր Մխիթար Գոշը, վորը իրավամբ կարող է համարվել հայ առակաբանության, Հայտնի յե, վոր XI դարում դպրոցներում ավանդում եյին առանձին առակա՝ «առասպելավարժություն» անվան տակ. Հայ մատենագիրներից վոմանք վոչ միայն հաստատում են առակների և ժողովրդական զրույցների գոյությունը դեռ ևս վաղնջական ժամանակ, այլ և վոմանք, թերևս ակամա մեջ են բերում այն զրույցները, «վոր ի գոհիկս պատմի առակյալ», ինչպես որինակ Գր. Մազիստրոսը, վորը պատմում է արտուտի առակը՝ Վոմանք՝ ինչպես Անանիա Իմաստասերը, Հովհան Ռձնեցին, Հովհան Մանգալունին և ուրիշները սիրել են «որինակով» խոսել, մի ձև, վոր այնքան մեծ վարպետություն կիրառել է Վարդան Այգեցին.

Հայտնի յե և այն, վոր հայ հին պատմիչները և առհասարակ յեկեղեցիներ չեն սիրել և հալածել են ժողովրդական զրույցները, վորոնք թվում նաև հեքիաթը և առակը և յերգը. Ներսես Շնորհալու մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Զի այնպես եյին կամք սրբույն, զի հնար իցե վոչ

Վոք խոսեցի ի խոսս աշխարհականս, բայց ի դրոց, վոչ ի գինարբուս և վոչ այլ ուրախութիւնս: Վասն այնորեկ արարնա յերգս Եռասոյց այնոցիկ, վոր պահելն գրեթէն. զի փոխանակ վայրապար ձայնից, զայն ասասցենք^{*)}, Բերդի զին-վորները «ստորին» լեզվով պատմում էյին «անառակ» զըրույցներ: Այդպես էյին նաև ռամիկները և վաճառականները զինարբուքի, այլ ուրախության և առաստաղակ իրենց առորայի մէջ, Բայց այդպես էլին նաև յեկեղեցու դպիրները և հոգեվորականների ստորին խավը, վոր զուսարվում եր ռամիկները վորդիններէ, Հետեաբար նրանց ավելի և ավորժելի էյին «վայրապար» զըրույցները՝ պարզ լեզվով, քան խրթին և ճոռոմ ճարտասանութիւնը, տրամախոսութիւնը և աստվածաբանական զխտելիքները: Գերազանցապես այդ խավից էյին նաև այն՝ յերբեմն անանուն գրինները, վորոնք դժվար տքնությամբ բազմացնում էյին ձեռագրերը:

Յեթե Ներսէս Շնորհալին հնար եր վորոնում, վորպես-դի այլևս վոչ վոք խոսի «աշխարհի» լեզվով կամ զեղջուկ բարբառով, ասպա միակողմանի կլինեք այդ փաստը բացատրել միայն իբրև ձգտում վերջ տալու «ստորին» հայերենին: Կարելի չէ յենթադրել, վոր զինվորները «վայրապար» խոսում էյին բարբառով, վորը հայերեն չէր և ահա Շնորհալին նպատակ է դնում այնպիսիներին լեզու սովորեցնել և

*) «Բանի վոր այնպես եր սուրբի կամքը վորպեսզի հնարավոր լինի, վոր վոչ վոք չ'խոսի աշխարհիկ լեզվով, բացի զբարբառ վոչ զհնարբուքի և վոչ այլ ուրախության ժամանակ, այդ նպատակով և նա յերգեր հորինեց և սովորեցրեց նրանց, վորոնք պաշտպանում էյին բերդը, վորպեսզի վայրապար ձայնի իփխարեն, այդ յերգերն ասեն»:

ինքը հեղինակում է առակներ և հանելուկներ, վոր զըված են վոչ թե խրթին զբարբառով, այլ պարզ հայերեն:

Ահա որինակ Շնորհալու մի հանելուկը նոսն մասին:

«Ե նա կոնաչ կոճակ բուր

« Անասպակ զինով ցած տկճոր

« Կարժիր մեղուք ի ներս աղվոր

« Յեղրայր զու կեր զինչ մեղրի ձոր:

Ունեմն հայ հին զպրության մեջ նոր չէր վոչ առակը և վոչ բարոյախոսութիւնն առաստաղակ, Կային յեկեղեցական քարոզիչներ, վորոնք խոսել և գրել էյին «որինակով»: Յեթե զպրոցներում ավանդում էյին «առասպելավարժութիւնն» իբրև առանձին առարկա, ասպ կարելի չէ յենթադրել, վոր գոյութիւն են ունեցել նաև դասագրքեր կամ առասպելների և առակների ժողովածուներ՝ իբրև նյութ զաստվանդանու Յեթե ավելացնենք և այն, վոր Յեղուպի առակները շատ վաղուց ծանոթ էյին հայերին, ինչպես և «Վարդանանու փիլիսոփայի» (ըստ Թոմա Արծրունու) առակները, ասպ կարելի չէ ասել, վոր Վարդանի առակների ժողովածուից առաջ յեղել են առակների այլ ժողովածուներ: Վորոնք հետագայում կամ խառնվել են Վարդանի առակագրքերին և կամ յեթե շարունակել են առանձին մնալ, ասպ վերակոչվել են Վարդանի անունով: Նույնիսկ հայ կենդանական վեպի վորոշ տարրեր մտել են «Վարդանագրքի» մեջ և հետագա սերունդները շարունակել են Վարդան Այգեցուն վերագրել առակների ժողովածուների մեծ մասը:

«Յեթե նույնիսկ պարզվի,—գրում է Ն. Մառը,—վոր վորեն անհայտ քարոզիչ առակը կիրառել և ուսուցման ժամանակ, Վարդանի նշանակութիւնը զընտել չի նսեմանա

363/9-12

Վարդանը, վոր ստեղծողն եր առակախառն քարոզի նոր տեսակի, ստացալ տաղանդաւոր քարոզչի յեզակի համբաւի, հիմը դնելով առակների լայն ոգտագործման՝ բարոյախոսական նպատակով: Վորքան ել պարզ լինեն ձեւերը, վորոնցով առասպելները և հերթաթիւները դառնում են առակներ, հայ զրականութեան մեջ այդ ձեւերն իբրև կիրառող առաջիմ մենք ճանաչում ենք Վարդանին և հենց նրա այլարանութիւնները կարող են համարվել հայերի զրական այդ սեռի լայնագոյն որինակաները: Հետեաբար առակները, վորոնք Վարդանի ժողովածուներն հիմնական շերտն են կազմում, ամբողջովին և հավիտյան կմնան կապիւծ Վարդանի անվան, թեկուզ նրանցից մեկի կամ յերկուսի վրա ուրիշ, ավելի հին հեղինակներ ունենան վորևէ իրավունք:

Մեզ այստեղ չի զբաղեցնում այն խնդիրը, թե Վարդանին վերագրած մոտ չորս հարյուր առակներից և մանրաւիպերից քանիսն են Վարդանի բուն գործը և քանիսը հաւելված են հետագայում, ինչպես և չենք զբաղվի առհասարակ առակների նշանակութեան քննութեամբ: Բոլոր առակագիրներէից յեւ պատմիչներից առաջ առակը հորինել յեւ պատմել և ինքը ժողովուրդը և այդ տեսակետից յեկեղծական նշանակութիւն ունի առակագրի անձնավորութեան խնդիրը:

Վարդան Այգեցու նշանակութիւնը մեծ է ամենից առաջ իբրև առակներ ժողովող և առակները մեկնութեան հետ միասին ճաշակով և վարպետութեամբ ամբողջացնող հեղինակ: Ահա Այգեցին կամենում է խաբարդանել ցանկաւ մարմինը և վեր հանել հոգին, իբրև մարդու բուն ելութիւն: Կճանձրանար ունկնդիրը, յեթե նա ավետաբանից մի նախադասութիւն բնաբան ընդունելով, հյու-

սեր քարոզը: Այգեցին դրա փոխարեն դործ է ածում պարզ գրույցի ձեւը, ինչպես կյանք տեսած մի ծերունի կարատեր վորդուն, և ասում է. «Յեզը մի լծիր եշի հետ. յեզը վորոճող է և եշը՝ վոշ: Այդպես հոգին անջատ է մարմնից, վորովհետեւ հոգին իմաստուն է և մարմինը ցանկասեր»:

Բերենք մի այլ որինակ Վարդանի առակախառն քարոզներից. «Մի մարդ ուներ չորս եշ, յերեքը՝ յերիտասարդ և ուժով և մեկը՝ պառավ և վատուժ: Յեւ տերը յերեքին չեր բառնում, այլ խնամում եր և դարձանում: Իսկ պառավ եշին՝ ծանր եր բեռնում և ընկավ պառավ եշը և այլևս չկարողացաւ տանել ծանր բեռ: Այսպես մարդս չորս ժամանակ ունի՝ տղայութիւն, յերիտասարդութիւն, կատարյալ հասակ և ծերութիւն: Այն յերեք հասակն վոր զորավոր են. մարդ չէ կամենում բառնալ բեռով, այլ պարարում և զիրացնում է ուտելով և ըմպելով և ամեն ծանր բեռ բառնում է ծերացած մարմնի վրա»:

Վարդան Այգեցու այս և այս կարգի առակները բնորոշ են իրեն: Կատարյալ և ամբողջական արվեստով: Հետագայում առակները փոփոխութեան են յենթարկվել, մըշակվել են՝ բերանացի պատմելով, ապա տարբեր գրիչներին ձեռքով գրել յեն առնվել, յուրաքանչյուր անգամ կրելով ժամանակի և պատմողի կնիքը: Այդպես առաջացել են առակների փոփոխակները, վորոնք տարբերվում են և՛ մեկնութեամբ, և՛ բովանդակութեամբ, և՛ լեզվով:

Վորքան ել կրոնա-բարոյական մեկնութեամբ Այգեցին ծանրաբեռնել է առակը, այնուհանգերձ նրա ստեղծագործութիւնը «աշխարհիկ» արվեստ է և վոշ հոգեւոր նա մեկն է այն զաղաթներից, վորոնց վրայով է անցնում միջնադարյան հայ քաղաքային մշակութի սահմանագիծը:



Յեթն Այգեցու առակներն աղատենք բարոյախոսական կը-
ցաններէից, ապա կնիւն զվարժք և սրամիտ պատմութիւն-
ներ, յերբեմն ուղղված հենց յեկեղեցու և ֆեոդալներէ
դեմ,—առակներ և իմաստուն մանրավեպեր, վոր սերելի
եյին միջնադարյան հայ վաճառականին և գյուղացուն,
նպատակ դնելով քարոզել հայ յեկեղեցու հալատո հան-
գանակը քաղաքներում և գյուղերում, ամբապնդելու հա-
մար այդ յեկեղեցու հիմքերը, վորոնց խարխում եր միջ-
նադարյան քաղաքը, — Այգեցին քարոզը մատչելի դարձ-
նելու համար լիարուսն ոգովի և ժամանակի ժողովրդա-
կան բանահյուսութիւնից, վերամշակել ե այն ըստ իր
նպատակադրման և այսպիսով դրի յեն առնվել բազմաթիւ
անգիր զրույցներ, Առակախառն քարոզների հետ գրակա-
նության մեջ խուժել ե առակը և մանրավեպը, իսկ վեր-
ջիններս իրենց հետ քեքել են նաև ժողովրդական լեզու և
վոճ, և այսպիսով սկսել ե ձևավորվել միջնադարյան
հայ «աշխարհիկ» արձակը:

Սակայն այդ արձակը հետագա դարերում չծավալեց
և չդարձաւ ամբողջական գործ, Այդպես չամբողջացաւ նաև
հայ ժողովրդական վեպը, ինչպես և միջնադարյան հայ
բանաստեղծութիւնն առանձին գոհարները չկապեցին վնչ
թագ, վնչ պսակ:

Բայց և այնպես Վարդան Այգեցին կառուցող վար-
պետներից ե այն հիմքի, վորի վրա պետք ե բարձրանար
միջնադարյան հայ արձակի շէնքը, Յեւ յեթե հետագա
«անբարի և խավարայնի» ժամանակներում այդ շէնքը չը-
բարձրացաւ, այնուհանդերձ հիմքը վկայում ե կառուցող-
ների, նաև Վարդան Այգեցու, մեծ վարպետութիւնը:



Մի քանի խոսք՝ այս հրատարակության մասին:

Արդեն ասացինք, վոր 1668 թ. Ամստերդամում լույս
ե տեսել առակների առաջին ժողովածուն «Աղվեսագիրք»
վերնագրով, Յերկրորդ անգամ տպագրվել ե Մարսելում
1676 -ին, յերրորդը՝ 1683 թ., դարձյալ Մարսելում Ե չոր-
րորդը՝ Լիվոռնոյում՝ 1698 թվին: Այսպիսով XVII դարի
յերկրորդ կեսին չորս անգամ տպագրվել են առակնե-
րի ժողովածուները: Ըստ Ն. Մառի բացատրության ա-
ռաջին հրատարակիչը ծանոթ լինելով յեվրոպական լեզու-
ների, կամեցել ե առակների ժողովածուն նմանեցնել այդ
ազգերի նույնանուն գրքերին, որինակ „Fuchsbuch“-ին և
անվանել ե «Աղվեսագիրք»: Ի դեպ, Ն. Մառը խորին ու-
սումասիրութեամբ հաստատել ե, վոր արաբական «Աղվե-
սագիրքը» թարգմանված ե հայերենից, Վարդանի առակ-
ների մի վորևե ժողովածույից:

Ի նկատի ունենալով, վոր այս հրատարակության
մեջ կան և բուն Վարդան Այգեցու առակներ, ինչպես և
այլ առակներ ու մանրավեպեր, վոր կան Վարդանի կամ
Վարդանին վերագրած առակների ձեռագիր և տպագիր
ժողովածուների մեջ,—մենք ես պահպանեցինք արդեն ըն-
դունված «Աղվեսագիրք» անունը:

Տեքստի, ինչպես և ծանոթութիւնների համար հիմք
ընդունելով Ն. Մառի յեռահատոր աշխատութիւնը՝ «Ժո-
ղովածոյք առակաց Վարդանայ», վորն աննման կոթող ե
միջնադարյան հայ արձակի,—մենք հաճախ գերադասել
ենք առակների այն վարիանտները, վորոնք «գոհնիկ» հա-
յերեն են և բովանդակութեամբ ավելի հարուստ: Առակնե-

ըի մեկնութիւնները չենք բերել, համարելով հնացած ա-
վելորդագրանութիւն, Համարյա անփոփոխ են վերնագրերը-
Բացի այդ, աշխատել ենք ըստ կարելոյն պահել բնագրի
վոճը, միաժամանակ նպատակ դնելով նյութը մատչելի
դարձնել ընթերցողների լայն խավերին:

Վ. ԱՐԴԱՆ. Ս. ՅԿԵՏԻ

Ա Ղ Վ Ե Ս Ա Գ Ի Ր Է



ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎ




Ի մարդ կալից
գրաստով գարի յեր
կրում տուն: Յեվ
քուռակը մոր հետ
գնում եր և հետ
դառնում: Իսկ տա-
նը, ուր կրում եյին
գարին, մի խող կար
կապած, վորին գիրացնում
եյին: Յեվ գարին
անպակաս եր նրանից,
վորպեսզի ուտի և գի-
րանա: Յեվ քուռակն
ասաց մորը. «Ինչհա-
մար այն խողն առանց
աշխատանքի ուտում և
գարին, վոր մենք կրում
ենք մեծ դժվարությամբ

և մեզ, վոր չարչարվում ենք, որը մի անգամ են գարի տալիս»։ Մայրն ասաց. «Լսիր, վորդյակ և մի շարաթ ևս համբերիր և ապա յես քեզ պատանխան կտամ և քո աչքով կը տեսնես»։

Յեվ մի շարաթ հետո եջը և քուռակը բեռով տուն եյին գալիս. քուռակը մորից առաջ եր գնում և լսեց խռնչոցի ահագին ձայն, վորովհետեւ խողը մորթում եյին։ Յեվ խրտնեց քուռակը և հետ փախավ դեպի մայրը և մայրն ասաց. «Ի՞նչ յեղավ քեզ, վորդյակ, վոր սոսկում ես. մի վախենար խողից, վորովհետեւ նրանից գարու հաշիվն են ուզում»։

Յեվ դարձյալ յեկան կալը՝ գարի կրելու։ Յեվ յերբ բարձած վերադարձան տուն, քուռակը բարձրացնելով վոտքի սմբակը, մորն ասաց. «Ո՞վ մայր, տես թե վոտքիս չի՞ փակչել գարու մի հատ, վոր ինձնից ել հաշիվ ուզեն, ինչպես խողից»։

ԱՅՐԻ ԿԻՆ ՅԵՎ ՎՈՐԴԻ




Ի այրի կին ունեւր տասը այծ և մի վորդի։ Յեվ ամեն որ վորդին այծերը տանում եր արոտ և մայրն ամեն որ մի շերեփ ջուր եր լցնում՝ կաթի մեջ և փոխ եր տալիս հա-

րեաններին։ Յեվ վորդին մորն ասաց, թե ինչո՞ւ յես այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարեաններին։ Մայրն ասաց. «Վորդի, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, վոր մեր կաթը

մի քիչ ավելի լինի, վոր ձմեռը մեզ թացան լինի»:

Իսկ մի ուր, յերբ վորդին այծերն արոտ եր տարեւ, յերկնքում ծնվեց մի փոքր ամպ՝ և անձրև յեկավ և հեղեղ յեղավ և այծերը սրբեց լցրեց գետը: Վորդին տուն յեկավ արևով և դատարկ և ձեռքին միայն փայտը: Մայրն ասաց. «Վորդի, հար են այծերը և ինչհա դու աշտոր արևով յեկար»: Վորդին ասաց. «Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, վոր խառնում եյիր կաթին և փոխ տալիս՝ հարե՜ վաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և յեկավ մեր այծերը տարավ, լցրեց գետը»:

ՄԻԱՅՆԱԿՅՈՒՑ ՅԵՎ ԴԱՄԲՈՒ ՇՈՒՆ



Ի միայնակյաց բնակ՝
վում եր մի գյուղի
մոտ և գյուղում նա
սիրեց մի աղջիկ և բա-
զում ժամանակ նրա
հետ շնանում եր
պոռնկությամբ: Յեվ
գյուղի տանուտերն
ունեւր մի գամբա շուն,

վոր խիստ պահող շուն եր և ամբողջ գյուղը պա-
հում եր: Մի գիշեր միայնակյացն յեկավ, վոր
շնանա այն կնոջ հետ և գյուղի յեղրին նրան
հանդիպեց տանուտերի շունը և գամբուեց նրա
վրա և նրան կծեց և արյունը ճապաղ արեց և

Հատ վերքեր արեց և նեղելով նրան քշեց. Յեվ միայնակյացը լալով և արյունաթաթախ մտավ խուցը և դուռը փակեց, զղջաց և չոքեց աղոթքի, լաց յեղավ և կուրծքը ծեծելով ասաց. «Աստված, բազում ժամանակ ե, վոր շնացա և չվախեցա քո դատաւտանից և վոր դառն դժոխքից զարհուրեցի, ըստ այս գիշեր զարհուրեցի մի գամբու շնից և չկարողացա շնություն անել»:

ԱՅԾԵՐ ՅԵՎ ԳԱՅԼԵՐ



ԱՎԱՔՎԵՑԻՆ այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ խռովություն, այլ վոր թե խաղաղություն: Յեվ հավաքվեցին գայլերը և ուրախացան մեծ ուրախությամբ և նամակով պատգամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Յեվ գրեցին այծերին. «Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհանամք աստծուց, վորովհետև մեզ համար մեծ խնդություն ե և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերդ իմաստու-

թյան, վոր հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խռովության և կռվի. և յեթե նրանց վերացնեք մեջտեղից, շուտով լինի խաղաղություն»։ Յեվ այս լսեցին այծերը, հաստատեցին և ասացին. «Իրավացի յեն գայլերը, վոր մեզ սպանում են, վորովհետև շները և հովիվը նրանց հալածում են մեզնից»։ Յեվ այծերը վտարեցին շներին և հովիվն և լեռավեցին, վոր հարյուր տարի մնա՞ն անխախտելի սիրով։ Յեվ այծերը ցրվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, վորովհետև պրածում եյին լավ արոտներում, ուտում եյին համեղ խոտեր, խմում եյին պաղ ջրեր և խնդում եյին և վազվզում եյին, փառք տալով, վոր հասան բարի ժամանակի։

Յեվ գայլերը համբերեցին հարյուր որ, ապա հավաքվեցին դաս-դաս, ընկան այծերի վրա և կերան։

ՅԵՐԿՈՒ ՆԿԱՐԻԶ




Ի վոմն թագավոր շինեց գեղեցիկ դարպաս և կամեցավ դարդարել այնպիսի նկարներով, վորոնց նման վոչ մի տեղ չեր յեղել։ Յեվ ընտրեց յերկու

նկարիչներին և մեկին տվեց մի պատը, մյուսին՝ մյուս պատը և նրանց միջև վարագույր քաշեց։ Յեվ յերբ նկարիչներն ավարտեցին իրենց գործը, թագավորը յեկավ, վոր տեսնի նրանց գործը և տեսավ, վոր մեկը նկարել եր գեղեցիկ պատկեր

և շատ հավանեց: Իսկ մյուսը բնավ վոչինչ չեւ
 նկարել. նա պատը շատ գեղեցիկ սարքել եր և
 կոկիկ հայելուց ավելի լավ: Յերբ թագավորը տե-
 սավ, վոր չեւ նկարել, այլ միայն կոկիկ եր,
 զարմացավ և ասաց. «Դու ի՞նչ ես արել»: Նա
 ասաց. «Յես ցույց կտամ իմ գործը»: Յեմ ապա
 վեր քաշեց միջի վարագույրը և յերբ լույսը ծա-
 գեց և լուսավորեց կոկած պատը, այն ժամանակ
 մթնեց նկարազարդ պատը, վորովհետև հայե-
 լու մեջ յերևում էին այն բոլոր պատկեր-
 ները, վոր նկարված էին մյուս պատի վրա: Յեմ
 թագավորն ասաց. «Այս մյուսից գեղեցիկ ե»:

ԱՌՅՈՒԾ ՅԵՎ ԱՂՎԵՍ



Ի առյուծ կորյուն
 ծնեց և հավաքվե-
 ցին կենդանիները
 կորյունին տեսնե-
 լու և ուրախանա-
 լու: Աղվեսն յեկավ
 և հանդեսի ժամա-
 նակ, բազմության
 մեջ առյուծին նա-

խատեց բարձրաձայն և անարգեց, թե ա՛յդ ե քո
 զորությունը, վոր ծնում ես միայն մի կորյուն
 և վոչ բազմաթիվ: Առյուծը հանդարտաբար պա-
 տասխանեց և ասաց. «Այո, յես ծնում եմ մի
 կորյուն, բայց առյուծ եմ ծնում և վոչ քեզ
 նման աղվես»:

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՎՈՐ



Ի մարդ ունեւր
չար կին և կինը
կովեց նրա հետ
և ասաց. «Կար-
ծում ես թե քո
յերեք վորդինե-
րը քեզնից են:
Մեկն է քեզնից,
իսկ յերկուսը՝

քիճ են»: Յեւ նա հարցրեց, թե վճրն է իմը և
կինը չասաց: Յեւ յերբ հայրը մեռնում եր, ասաց.
«Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ վոր-
դուն»: Յեւ յեղբայրները կովում եյին իրար
հետ. մեկն ասում եր, թե յես եմ հարազատ

վորդին և մյուսը՝ թե յես եմ: Յեւ գնացին մի
իմաստուն դատավորի մոտ: Յեւ դատավորը
հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից և
նետ արձակել նրա վրա: Ով հորը զարկեր նետով
և նետը ծակեր հոր մարմինը, նա յեր հարազատ
վորդին: Յեւ յերկու վորդիները զարկեցին հորը,
իսկ ճշմարիտ վորդին դանակը քաշեց, վոր սպա-
նի յեղբայրներին և լաց յեղավ դառն արտա-
սուքով և թաղեց հոր մարմինը:

Յեւ իմացան, վոր նա յեր հարազատ վորդին
և նրան տվին հայրենի կայքը:

ԱՌՅՈՒԾ ՅԵՎ ԳԱՅԼ ՅԵՎ ԱՂՎԵՍ



ՌՅՈՒԾՆ և գայլն և
աղվեսն յեղբայր
յեղան և վորսի յե-
լան և գտան մի խոյ,
մի վոչխար, վոր և
մաքի և մի գառ:
Ճաշի ժամին առ-
յուծն ասաց գայ-
լին, թե բաժանի՞ր

մեր մեջ այդ վորսը, Յեվ գայլն ասաց. «Ո՛ր վ թա-
գավոր, աստված արդեն բաժանել ե՛լ խոյը քեզ,
մաքին ինձ և գառն աղվեսին»։ Յեվ առյուծը
բարկանալով, ապտակ զարկեց գայլի ծնոտին և
դուրս թռան գայլի աչքերը և նա նստեց և դառն

լաց յեղավ։ Յեվ դարձյալ ասաց առյուծն աղվե-
սին, թե բաժանի՞ր վոչխարները մեր մեջ։ Յեվ
աղվեսն ասաց, «Ո՛ր թագավոր, աստված արդեն
բաժանել ե՛լ խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրա-
մենքին և գառը քեզ՝ ընթրիքին»։ Յեվ առյուծն
ասաց. «Ո՛ր խորամանկ աղվես, քեզ հվ սովորեց-
րեց այդպես ճիշտ բաժանել։

Յեվ աղվեսն ասաց. «Ինձ սովորեցրին գայլի
աչքերը, վոր դուրս թռան»։

Գ Ի Ն Ի



Ի Թագավոր մի
վորդի ունեւր և
հրաման արեց նա-
յիպներին, թե ա-
մեն որ ձեզնից մե-
կը թող տան ի իմ
վորդուն և պատվի:
Յեւ տանում եյին:

Յեւ մի որ մի նայիպ պատվելու յերթարել թա-
գավորի վորդուն և յերեկոյան նրան տարավ
Թագավորի տունը և ինքը գնաց. Թագավորի
վորդին խիստ գինով եր և հարբած դուրս յեկավ,
ընկավ աղբանոցը և մեռավ: Յեւ Թագավորը

հրամայեց, թե իմ իշխանութեան ներքո ինչքան
այգի կա՝ փակեք և կարասները կոտրատեք: Յեւ
այդպես արին:

Յեւ մի այրի կին մի վորդի ունեւր և այրի
կինը պահեց յուր հնձանը և գինին և ամեն ա-
ռավոտ և յերեկո հացի վրա յերկու թաս գինի
յեր տալիս վորդուն: Յեւ այրի կնոջ վորդին մի
գիշեր դուրս յեկավ, սպանեց Թագավորի առյու-
ծին և Թագավորն առավոտյան հրամայեց, թե
ով վոր սպանել ե իմ առյուծին, յեթե զա և ինձ
պատմի՝ նրան չեմ պատժի: Յեւ յեկան այրի
կինը և նրա վորդին: Թագավորը նրան հարցրեց,
թե ինչպես սպանեցիր առյուծին: Յեւ նա ասաց,
թե գիշերով դուրս յեկա, հանդիպեցի առյուծին
և սպանեցի: Յեւ մայրն ասաց, թե նրան գինով
ե սնուցել և պատմեց, թե ինչպես ե գինով սնու-
ցել:

Յեւ Թագավորը հրաման արձակեց, թե այգի
անկեք և գինին այնպես խմեք, վոր առյուծ
սպանեք և վոչ թե աղբանոցում մեռնեք:

ԻՄԱՍՏՈՒՆ ԱՎԱԳ ԵՇ




ԱՏ եշեր գնում եյին արքունի
գործով և նրաքց մեջ կար մի
ավագ եշ՝ իմաստուն և մեծ, քան
մյուսները: Յեվ ամենքը նրան
պատվում եյին, վոր-
պես հայր և առաջ-
նորդ: Յեվ ահա բարձ-
րանում եյիմ մի սար

և նա խառանչեց և գոռաց սաստիկ՝ ահագին և
հետեւի կողմից մեծամեծ ճայթյուն արձակեց:
Յեկան մյուս եշերը և ասացին. «Ո՛ր պատվական
հայր, քո առջեւի ձայնից բոլորս ունենք, իսկ
ի՛նչ եր այն ահագին ճայթունը, վոր քո հետեւի
կողմից յելավ. աղաչում ենք, ասա մեզ»:

Յեվ նա ասաց. «Ո՛ր իմ վորդիներ, ձեր առաջ
սուտ չեմ յերդվի և ճշմարիտ կասեմ, վոր առ-
ջեւի ձայնի զորությունից բնավ չեմ կարող իմա-
նալ, թե ուրիշ ինչ ճայթյուն ե յեղնում իմ հե-
տեւի կողմից»:

ՄԻԱՄԻՏ ԳՈՂԵՐ



դիկի մոտ են: Յեւ կինը մարդուն ասաց, թե այս ամեն գանձերը և վոսկին և կերպասը քեզ վճրտեղից են: Յեւ մեծատուն մարդն ասաց. «Գնում եյի գողության, մեծատուն մարդկանց յերդիկով իջնում եյի և լուսնկա յեր, ինչպես

այժմ և լուսնի շողերը յերդիկից ներս եյին ընկնում, ինչպես այժմ և յես գրկում եյի շողերի սյունը և վայր եյի իջնում և այնպիսի մի բան եյի ասում, վոր ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, յերեւում եր ինձ և կապում եյի լուսնի շողերին և վեր բարձրանում: Յեւ այս ամենն այդպես եմ վաստակել:

Յերբ գողերն այդ բանը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ բանին և լուսնի շողերը գրկելով յերդից վայր ընկան: Եւ ջարդվեցին:

ՅԵՂԵԳՆ ՅԵՎ ԾԱՌԵՐ



Ի Թագավոր զբոսան-
քի յեկավ շրջելու լեռ-
ներում և հովիտնե-
րում: Յեվ տեսավ, վոր
մեծամեծ ծառեր կա-
յին՝ կոտրատված և
փշրված և միայն մի
յեղեգ կար՝ կանգուն
անարատ: Յեվ Թագա-
վորն ասաց. «Ո՛վ յե-

ղեգ, ասա ինձ, Թե ինչպես հաստատուն ես մնա-
ցել, յերբ մեծամեծ ծառերը փշրվել են»: Յեվ
յեղեգն ասաց. «Ո՛վ Թագավոր, յերբ սաստիկ հողմ
բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ
կանգնեցին հողմի դեմ և հողմը նրանց փշրեց.
իսկ յես խոնարհվեցի հողմի կամքով և ահա կան-
գուն եմ»:

ԻՇԵԱՆ ՅԵՎ ԱՅՐԻ ԿԻՆ



Ի իշխան կար խիստ
չար և անիրավ: Յեվ
նույն քաղաքում ապ-
րում եր մի այրի
կին և իշխանը խարկ
պահանջելով նեղում
եր նրան և այրի կինն
աղոթում եր, վոր իշ-
խանն ունենա խաղաղ
և յերկար կյանք:

Գնացին, ասացին իշխանին, Թե քո չարության
համար աղոթում ե այրին: Յեվ իշխանը յեկավ և
ասաց. «Յես քեզ բարիք չեմ արել, ո՛վ կին, դու
ինձ համար ինչ՞ես յես աղոթում»:

Այբի կինն ասաց. «Քո հայրը վատ մարդ էր.
յես անիծեցի և նա մեռավ: Դու նստեցիր նրա
տեղը՝ ավելի խիստ չար: Յեվ այժմ վախենում
եմ, վոր մեռնես և քո վորդին քեզնից ավելի չար
լինի»:

Ի ՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐ



Ի վոմն իմաս-
տուն զինվոր
պատերազմ էր
գնում և նա յեր-
կու վոտքով կաղ
էր: Յեվ զին-
վորներէց մեկը
նրան ասաց. «Ո՛վ
վողորմելի, ո՛ւր
ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, վորովհետեւ
փախչել չես կարող»: Յեվ նա ասաց. «Ո՛վ անմիտ,
յես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգ-
նելու և կռիւելու և հաղթելու»:



ԱՐ մի Թագավոր և
ուհեք նա մի սի-
րելի ոձ, վոր նրան
ամեն որ բերում եր
մի կարմիր դահե-
կան: Յեվ Թագա-
վորն ունեցավ մի
մանուկ, վորին
սնուցում եր գահի
վրա և ոձը նետում
եր մանկան պարա-
նոցով և այդպես

խաղում եյին ոձն ու մանուկը: Յեվ յերբ մա-
նուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ
սուրը հանեց և կտրեց ոձի պոչը և գետին գցեց:
Յեվ զայրացավ ոձը, թուշնով զարկեց մանուկին

և մանուկն իսկույն մեռավ և ոձը գնաց ոտար
յերկեր: Յեվ յերբ Թագավորն յեկավ և մանու-
կին ոձի թուշնից սեղացած և մեռած տեսավ և
ոձի պոչը գետնին ընկած, իմացավ, վոր յուր
մանուկն ե թրով կտրել ոձի պոչը: Յեվ սգաց
վորդուն, տարավ Թաղեց գերեզմանում:

Յեվ անցավ մի առ ժամանակ և Թագավորը
խնդրակներ ուղարկեց այն ոձի մոտ և ասաց.
«Գիտեմ, վոր անաջ իմ վորդին ե ծուռթյուն ա-
րել. նա կտրել ե քո պոչը, ապա դու կծել ես
նրան: Ինչ վոր յեղավ՝ յեղավ և իզուր գնացիր:
Արի և մենք կլինենք անաջվա նման իրար սի-
րելի և միասին կապրենք»: Իսկ ոձը պատասխան
տվեց և ասաց. «Այդպես չե. քանի վոր յես պի-
տի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո վորդու
գերեզմանին, ուրեմն մեր միջից թշնամությունը
չի վերանա: Լավն այն ե, վոր դու և յես իրարից
հեռանանք, վորպեսզի այլ ուրիշ մեծագույն
չարիք չծնվի մեր մեջ»:

ԱՌՅՈՒԾ ԶԵՎ, ԱՂՎԵՍ ԶԵՎ, ԱՐՋ




ՌՅՈՒԾՆ հիվանդա-
ցավ և ամեն կեն-
դանինները յեկան
նրան տեսության.
միայն աղվեսն ու-
շացավ: Արջը չա-
րախոսեց նրան և
աղվեսը դռնամու-
տից լսեց և ներս
ընկնելով
թավալվեց
առյուծի

առաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի
չեկար գարշելի. ասա ինձ, ինչո՞ւ ուշացար»: Աղ-
վեսն ասաց. «Մի բարկանար, բարի թագավոր,
յերդվում եմ քո գլխով, վոր քո առողջության հա-
մար այցելեցի շատ բժշկապետների և մեծ չար-

չարանք քաշեցի, բայց իմացա դեղը քո բժշկու-
թյան»: Յեվ առյուծն ասաց. «Բարի յեկար, ի-
մաստուն կենդանի, ինչն և այդ դեղը»: Աղվեսն
ասաց. «Խիստ պիտանի յե և դյուրին. բժշկա-
պետներն ասացին, թե կենդանի հանեք արջի
մորթին և տաք տաք քցեք առյուծի վրա և իս-
կույն մորթին ցավը կհանի հիվանդից»: Յեվ
առյուծը հրամայեց. արջին բռնեցին և սկսեցին
հանել մորթին: Իսկ նա վայում եր և արձակում
մեծամեծ վռնոց:

Յեվ աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան,
ով արքունիք մտնելով կչարախոսի մեկին»:

ԿԱԹ ՄԵՂՈՒ ՊԱՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ



Ա մարդ խանութ
ունիւր և մեղր եր
ծախում և մեղրից
մի կաթ կաթեց
զետնին և մի պի-
ծակ նստեց կաթի
վրա և կատուն
վազեց և պիծակին
առավ և նրանից

հետո շունը վազեց և կատվին առավ և խանութի
տերը շանը զարկեց և սպանեց: Յեւ այն գյու-
ղին զբացի մի գյուղ կար և շունն այդ գյուղից
եր: Յերը շան տերն իմացավ, թե խանութպանն

սպանել և յուր շանը, այն ժամանակ յեկավ և
սպանեց խանութպանին: Հետո յերկու կողմից
վեր կացան գյուղացիք և միմյանց հետ մեծ
պատերազմ արին և նրանց միջև կոտորած յե-
ղավ և յերկու կողմից կենդանի մնաց մի մարդ,
մի կաթ մեղրի համար:

ԿՏԱԿ ՎԱՍՆ ԳԱՆՁԻ




Ի իմաստուն և աղ-
քատ մարդ ունեւ
ծույլ վորդիներ
Մահվան ժամին նա
կանչեց վորդիներին
և ասաց. «Ո՛վ զա-
վակներ, իմ նախ-
նինները շատ գանձ

են թաղել մեր այգում և յես ձեզ ցույց չեմ տա
նրա տեղը: Այդ գանձը կգտնի նա, ով շատ աղ-
խատի և խոր փորի»: Յեվ հոր մահից հետո վոր-
դիներն սկսեցին աշխատել մեծ յեռանդով և խո-
րապույն եյին վարում, վորովհետև յուրաքան-

չյուրն աշխատում եր, վոր ինքը գտնի գանձը:
Յեվ այգին սկսեց աճել և զորանալ և առատ
բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով:

ՈՒՂՏ ՅԵՎ, ԳԱՅԼ, ՅԵՎ, ԱՂՎԵՍ



ԻՂՏԸ և
 ՎԱՅԼ և
 աղվեսը
 յեղբայր
 լեզան և
 ճանա-


պարհ ընկան և ճանապարհին դառն մի բլիթ հաց և միմյանց ասացին, թե ով ալազ և, թող նա ուտի: Յեւ սկսեցին ասել իրենց տարիքը: Աղվեսն ասաց, «Յեւ այն աղվեսն եմ, վորի առնունը Ադամը զրեց»: Գայլն ասաց, «Յեւ այն

գայլն եմ, վորին նոյն տապանն առաւ»: Յեւ ուղարկ տեսնելով, վոր նրանք իրենից ալազ դուրս յեկան և հացը պիտի առնեն, հացը բերանն առաւ և բարձրացնելով ասաց, «Մի՞թե յես յերեկվա աղան եմ, վոր այսչափ մեծացրել եմ իմ սրունքները»:

Յեւ սկսեց հացն ուտել: Իսկ աղվեսը և գայլը ցատկելով նրա շուրջը, վռչինչ չկարողացան առնել և փախան:




ԱՎԱՔՎԵՅԻՆ թռչունները և ասացին, թե վորի ձայնը զորավոր է, նրան մեզ թագավոր դնենք, վորպեսզի պատերազմի ժամին կանչի մեզ: Յեվ կռուակը յերկինք բարձրացավ և գոչեց. նրան հավանեցին թռչունները և ոճեցին թագավոր: Ելը յեկավ և ասաց. «Այ, յեթե ինձ վոտի տեղ առնեյիք, վոր նրա փոխարեն յես բարձրանայի, դուք կլսեյիք, թե ում ձայնն և զորավոր»:



ԵՉԸ և ձին խոսացին միմյանց հետ: Ձին ասաց. «Դու հիվ ես, կամ լճնչի պետք ես»: Ձին ասաց. «Յես ձիյեմ և ինձ թագավորները և իշխանները և պարոնները զարդարում են վոսկով և արծաթով և բազմում են ինձ վրա»: Յեզն ասաց. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ յես, վորովհետեւ յես եմ վաստակում և չարչարվում և հոգնում և ապա դու և քո թագավորն ուտում եք: Յեվ բոլոր մարդիկ ուտում են իմ

վաստակը և յեթե չվաստակեմ դու և քո թաղա-
վորն իսկույն կմեռնեք: Յեվ դու յերախտամու-
մի լինիր»:


ՀԻՄԱՐ ՅԵՎ ՉՄԵՐՈՒԿ



Ի հիմար և միամիտ
մարդ ունեի մի դա-
հեկան և առնելով
դահեկանը պնաց
քաղաք մի եղ պնե-
լու և շրջեց քաղա-
քում և շուկայում
և չգտավ մի դահե-
կանի եղ, ապա
կրկին յեկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ
և հիացմամբ հարցրեց. «Այս ի՞նչ է»: Յեվ վա-
ճառականներն իմացան, զոր նա հիմար է և ա-
սացին, թե հնդու եղի ձու յե և կհանի հնդու
մեծ եղ: Յեվ ուրախանալով մարդը, տվեց դահե-

կանը և առավ հնդու եղի ձուռն: Յեւ վաճառա-
կանները-նրան պատվիրեցին, թե ձեռքիդ զգուշ-
տար, թե չե կկոտրվի և եղը միջից կփախչի: Յեւ
ձմերուկը ձեռքին մարդն սկսեց գնալ դառնվայր
ճանապարհով և նրա վոտքը սայթաքեց, ձմերու-
կը ձեռքից դուրս պրծավ և զլորվեց խիտ ան-
տառի մեջ և անտառից մի նապաստակ վազեց և
սկսեց փախչել, իսկ մարդը կարծեց, թե ձուռն
կոտրվել է և ահա եղը յեկել և փախչում ե: Յեւ
հետեից վազելով կանչում հր նապաստակին և
ձայն եր տալիս. «Ա՛յ հնդու եղ, վա՛յ ինձ, մի
փախչիր. քուռի, քուռի խնայիր ինձ և վերա-
դարձիր»:

ԵՇԻՆ ԹՈՌ ԾՆՎԵՅ



Շին ալետիս տվին՝
թե ցնծա և ուրախ
յեղիր և մեծ ընծա
պարգևիր, վորովհետեւ
քեզ թող ծնվեց: Յեւ
եղն ասաց. «Վա՛յ ինձ
բարեկամներ, յեթե

հարյուր թող ել ծնվի, չեն թեթևացնի ծանրու-
թյունն իմ մեջքի բեռան»:

27

ԱՂԲՈՍ ՅԵՎ ԱՂԵՏԱՐԱՆ




Ի աղքատ մի
գյուղ յեկավ և
մտավ գյուղի
յեկեղեցին, վոր
խարխուլ էր և
անձրևակեղ: Յեվ
այն աղքատը
անձրևաթաց եր
և քաղցած և հա-

գել էր պատառտուռն զգեստ և զոգուս եր և
հոգնել եր ճանապարհից: Յեվ ներս մտավ քա-
հանան, սկսեց ժամ ասել: Առավ ավետարանը և
կարդաց այն եջը, ուր գրված եր, թե ոտարական

եյի՝ ընդունեցիք ինձ, մերկ եյի՝ հագցրիք ինձ՝
քաղցած եյի՝ կերակրեցիք ինձ, ծարավ եյի՝ հա-
գեցրիք ինձ: Այն աղքատը լսեց և ուրախացավ:
«Այս ինձ համար ե ասված և ահա շուտով կկա-
տարեն իմ կամքը»: Իսկ քահանան ժամն արձա-
կեց և զնաց տուն և աղքատին թողեց յեկեղեցու
մեջ և հոգ չտարավ նրա մասին: Յեվ աղքատն
ասաց. «Այն գիրն, վոր կարդաց, նա սուտ եր»:
Յեվ առավ ավետարանը, վրան քար դրեց և սու-
ղեց ջրի մեջ: Յեվ քահանան յեկեղեցի գալով
ավետարանը չգտավ և աղքատին ասաց. «Ո՞ւր ե
ավետարանը»: Յեվ աղքատն ասաց քահանային.
«Ի՞նչ ես անում սուտ ավետարանը, և յես տարա
ջուրը գցեցի»: Յեվ քահանան բարկանալով
սկսեց ծեծել աղքատին և աղքատն ասաց. «Ի՞նչ
չու յես ծեծում ինձ, անիրավ: Եթե հավատում
ես, թե ավետարանն աստծո ճշմարիտ խոսքն ե,
ապա ինչո՞ւ չես կատարում նրա կամքը: Վորով-
հետև յես ոտարական եմ և ինձ չեք ընդունում,
մերկ եմ և ինձ չեք հագցնում, քաղցած եմ և չեք
կերակրում ինձ, ծարավ եմ և ջուր չեք տալիս:
Միթե աստված այդ բաների պակասությունն
ունեք և այդ ամենն իրեն համար ասաց»:


ՀԱՅՐ ՈՒ ՎՈՐԳԻ



Ի մարդ աղջիկ
առավ վորդու
համար և վորդին
ամուսնացավ
աղջկա հետ և
յերբ միավորվեց
հրա հետ, շատ
հիացավ ամուս-
նության գործի
վրա և ուրախացավ և սկսեց հորը խրատել ա-
մուսնության գործի մասին:

Յեվ հայրն ասաց. «Ո՛վ վորդյակ, յես ամուս-
նության գործով ծնեցի քեզ և այժմ դժւ յես
խրատում ինձ»:

ՄԱՐԴ ՅԵՎ, ԸՆԿՈՒՅԶ ՅԵՎ ՁՄԵՐՈՒԿ




Ի մարդ ընկույզի
ծառի տակ ձմերուկ
եր ցանել: Յեվ
պտուղի ժամանակ
յեկավ, տեսավ մե-
ծամեծ ձմերուկնե-
րը և ծառին նայեց,
տեսավ, վոր ըն-
կույզը մանր եր:

Մարդն ասաց. «Տեր աստված, ինչ վոր ստեղծել
ես՝ ամենը զարդին ե և մի բանի նման: Իսկ
այս յերկու պտուղը անկարգ են և բանի նման
չեն»: Մարդն ասում եր, վոր ընկույզի տեղ ձմե-

ըուկ պիտի լինեք ծառին և ընկույզը ձմերուկի
թիփի վրա: Յեվ նա պառկեց ծառի տակ և նայեց
ծառին և հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից
և շատ պինդ կպավ նրա ճակատին և ճակատը
պատռեց և արյուն յելավ: Յեվ մարդը վեր կա-
ցավ տեղից և աղաղակեց. «Տեր աստված, ինչ
վոր ստեղծել ես, ամենը կարգին ե և կատարյալ
և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը թող
իմից վատ լինի, վորովհետև յեթե ընկույզի տեղ
ձմերուկ լինեք, ինձ պիտի սպանեք»:


ՅԵԿԵՂԵՑԻ ՅԵՎ ԶՐԱՂԱՑ



ԵԿԵՂԵՑԻՆ պարծեցավ
յուր սրբությամբ և ա-
սաց, թե «Յես եմ տա-
ճար աստուծո և դեպի
ինձ են գալիս քահա-
նաները և ժողովուր-
դը ալոթք մատուցա-
նելու աստծուն և պա-
տարագ, և հաշտվում
ե աստված աշխարհի
հետ և մեղքերին թո-
ղություն ե լինում»:

Այն ժամանակ ջրաղացն ասաց յեկեղեցուն, թե
«Ինչ վոր դու ասում ես, արդար ե և ճշմարիտ,
բայց դու իմ յերախտիքը մի մոռանա, վոր գիշեր
ցերեկ աշխնտում եմ և դատում այն ինչ վոր ու-
տում են քահանաները և ժողովուրդը և ապա քեզ
են գալիս աղոթելու և յերկրպագելու աստծուն»:

ԱՄԵՆԱՏԻՅՏ ՄԱՐԴ



Ի թագավոր կամե-
ցավ աշտարակ շի-
նեղ և աշտարակը
քանի ցերեկը շի-
նում եյին, գիշերը
փուլ եր գալիս: Յեվ
նա հաւաքեց յո՛ւր
գիտուններին և
պատճառը հարց-

րից: Նրանք ասացին. «Յեթե կամենում ես, վոր
այլևս չփլչի, դու գտիր մի տգետ մարդ, վորից
ավելի տգետ մարդ չլինի և նրան կենդանի դիր
պատի մեջ և պատը թող շարեն. և այլևս չի՛
փլչի»: Յեվ թագավորն ասաց. «Այդ բանի ընտ-

րութ յունը յեվս դուք արեք և գտեք մի տգետ
մարդ, վորին կենդանի թողեն պատի մեջ:

Յեվ գիտունները նստեցին միասին վորոշե-
լու, թե ինչ տեղ կարող են գտնել տգետ մարդ
և մեկն ասաց. «Ձկնորսն է տգետ, քանի վոր նրա
առն ու տալը մարդու հետ չի, այլ ջրի և ձկնե-
րի»: Իսկ վոմանք ասացին. իշապանը, վոր իշու
հետ է լինում և յուր վողջ կյանքն անց է կաց-
նում զրաատի հետ, շրջելով լեռ և անտառ: Վո-
մանք ծովաբարին ասացին, իսկ վոմանք հով-
վին, վոր ամառ—ձմեռ վոշխարներին հետ շրջում
է լեռներում, չի մտնում գյուղ կամ քաղաք:
Յեվ հավանութ յուն արին և կամեցան հովվին
բերել:

Այն ժամանակ գիտուններից մի վոմն ասաց.
թե «Մեր թագավորը մի հովիվ ունի, վոր ծնվել
է սարում վոշխարների մեջ և սնվել է այնտեղ
և յուր կյանքում վոշ գյուղ է մտել, վոշ քաղաք»:
Յեվ ուղարկեցին տաս ձիավոր, վորպեսզի մար-
դուն բերեն: Յեվ ձիավորները գնացին գտան
հովվին, վոր կթում էր վոշխարը և վողջունելով
ասացին. «Թագավորը քեզ կանչում է»: Հովիվը
ասաց. «Յես իմ կյանքում վոշ քաղաք եմ գնա-
ցել և վոշ գյուղ. ինձ ինչո՞ւ յի կանչում»: Իսկ

նրանք խորամանկությամբ ասացին չենք իմանում»։ Իսկ հովիվը պատվեց նրանց, գառ մորթեց և պանիր բերեց և ուրախացրեց նրանց և յերգմամբ հարցրեց կանչելու պատճառը։ Յեւ վրանք ասացին, թե այս պատճառով ե քեզ կանչում, վորովհետեւ թագավորի գիտուններն ասել են, վոր մի տգետ մարդու պետք ե դնել պատրմեջ, վորպեսզի պատը շեն մնա։

Այն ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց. «Հիմարը և տգետն այն գիտուններն են, վոր այդպիսի ընտրություն են արել»։ Յեւ մի վոչխար բերելով ասաց. «Յես ձեզ ցույց կտամ իմ տգիտությունը»։ Յեւ ասաց. «Այս վոչխար յերկու գառ ունի փորում, մինը եզ ե, և մյուսը՝ վորձ. մեկի գլուխը սև ե և մյուսինը՝ սպիտակ»։ Յեւ վոչխարը մորթեց և գառները փորից հանեց և այնպես եր, ինչպես ասաց։ Յեւ մի այլ վոչխար բերելով ասաց. «Այս վոչխարը մեկ գառ ունի փորում, մարմինը սև ե, գլուխն սպիտակ ե ինքը վորձ»։ Յեւ մորթեցին, տեսան այնպես։ Յեւ հովիվն ասաց. «Վոչխարի այս յերկու հոտը, վոր կա ձեր առաջ, ամենին գիտեմ, թե վորն ե ծնելու և վորն ե ստերջ և վորն ե վորձ ծնելու և վորը՝ եզ և վորը սև կամ սպիտակ և վորը սև ու

սպիտակ պուտերով։ Ձեր գիտունները կարող են այդ իմանալ»։ Ձիավորներն ասացին. «Վոչ ամենեին»։ Հովիվն ասաց. «Ուրեմն իմացեք, վոր յես չեմ այն հիմարը և տգետը, վորին դուք փնտրում եք։ Իսկ յեթե կամենաք, յես ցույց կտամ տգետ մարդուն։ Թագավոր թող յուր նախիպին բռնի, թալանի և ինչ ունի ամենն առնի և քաղաքի հրապարակում նրան կախի և չարաչար տանջի, վորպես զի բոլոր քաղաքացիները տեսնեն։ ապա նախիպին թող տանեն թագցնեն և ասեն, թե նրան սպանեցին։ Յեւ յերեք ուր քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ վոր կգա և հանձն կառնի նախիպի գործը, նրա ամեն ապրանք այդ մարդուն կտանք և նրան կնշանակենք թագավորի նախիպ։ Այն մարդը, վոր կտեսնի այդ խաղը և կլսի ինչ վոր արին նախիպի գլխին և առաջանալով կասի, թե յես ուզում եմ լինել նախիպ, այն մարդն ե հիմար և տգետ, նրան բռնեցեք և կենդանի դրեք պատրմեջ, վորպեսզի այլևս պատը չիլչի և շեն մնա»։

Իսկ նրանք յեկան և թագավորին պատմեցին և թագավորն արեց այնպես, ինչպես հովիվն ասել եր և մինչդեռ քաղաքում կանչում եյին, թե ով գա և հանձն առնի նախիպի գործը և իշխանու-

թյունը, նա կստանա նրա ապրանքը և հողը, այն ժամանակ մոտ վաղեց մի ջրմի և թոնի մարդ և ասաց, թե յես հանձն կառնեմ այդ գործը: Յեվ նրան հարցրին, թե տեսա՞ր ինչ արին նայիպի գլխին: Նա ասաց. «Այո տեսա»:

Յեվ իսկույն առան նրան և տարան, կենդանի դրին պատի մեջ և պատը հաստատուհն մնաց:

Ա.Գ.ՎԵՍ ՅԵՎ, ՎՈՐՍՈՐԴ



ՈՐՍՈՐԴԸ շներով տա-
ռապում և նեղում եր-
տղվեսին: Յեվ արվեսը
դարձավ և ասաց. «Ա-
ղաչում եմ քեզ, ասա
թե ինչո՞ւ համար ես
ինձ նեղում»: Յեվ
վորսորդն ասաց. «Վոր-
պես զի
հանեմ քո
մորթին»:
Աղվեսը

կանգնեց և ասաց. «Տեր աստված, փառք քեզ,
վոր սրա ուղածն այս ե: Իսկ յես կարծում եյի,
թե ինձ ուղում ե՞ նշանակել մեր գավառի հա-
վարած կամ թռչնոցի վանահայր»:

ԻՇԽԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ




յերբ վորդին մեռավ և հարսը մնաց, Յեվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե «Կ՞մ իրավունք և նրանք ասացին, թե չկա իրավունք, վոր հայրն առնի հարսին: Յեվ նա չկամեցավ լսել նրանց և գտավ մի այլ ի-

մա մի աշխարհակալ իշխանավոր և նա ունեւր մի խիստ գեղեցիկ տղա: Յեվ իշխանավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կառնեմ, վոր կին լինի իմ վորդուն և ունենամ գեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի: Յեվ գնաց բերեց մի գեղեցիկ հարս և դեռ թող չէր ունեցել,

մաստուն, վոր նրա սիրելին եր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուն յերկու ազգ կա և նրանցից վոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»: Յեվ իշխանավորն ասաց, թե «Ինչու աշխարհի յոթանասուն յերկու ազգին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»: Յեվ իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել, վորովհետև կսպանես ինձ»: Յեվ նա յերդկեց չպատժել նրան, յեթե պատճառն ասի:

Այն ժամանակ իմաստունն ասաց. «Վորովհետև դու ամեն ազգից դուրս ես և քո վրա չկա իշխանություն և ինչ կամենաս կարող ես անել»:

ԱՂՎԵՍ ՅԵՎ ԹՂԹԱՏԱՐ ԳԱՅԼ




ՂՎԵՍԸ մի գրած
թուղթ գտավ և
տարավ գայլին
և ասաց. «Այս
չափ ժամանակ
աշխատեցի և
բարեխոս մար-
դիկ մեջ գցեցի
և իշխանից քեզ

համար թուղթ հանեցի, վոր տմեն գյուղ՝ ուր
հանդիպես, քեզ պիտի տա մի վոչխար: Յեւ վոչ-
ջուն և վոչ մարդ քեզ չպիտի նեղեն»: Յեւ այդ-
պես խաբեց գայլին և միասին գնացին մի գյուղ
և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց

գայլին: Յերբ գայլը գյուղի մեջ մտավ, վրա
թափվեցին շները և մարդիկ և նրան գզեցին և
գանահարեցին: Յեւ արյունաթաթախ գայլը հա-
զիվ ազատվելով հասավ աղվեսին: Յեւ աղվեսն
ասաց. «Ինչո՞ւ թուղթը ցույց չտվիր»:

Յեւ գայլն ասաց. «Ցույց տվի, բայց գյուղում
հազար շուն կար, վոր գիր չգիտեր»:


ԱՅՐԻ ԿԻՆ ՅԵՎ ԽՈՐԹ ՎՈՐԴԻ



Ի այրի կին ու-
նեք մի կով և
նրա խորթ վոր-
դին ունեք մի եղ:
Յեւ խորթ վոր-
դին գողանում
էր կովի կերը
տալիս եղին: Յեւ
այրի կինն աստ-

ծուն աղաչեց, վոր աստված եղին մեռցնի: Բայց
կովը մեռավ և այրին լաց եղավ և ասաց. «Ո՞վ
աստված, միթե չկարողացար եղը կովից տար-
բերել»:

ՀԱԼԱԼ ՄԱՐԴ



Ի յերիտառարդ
ուխտել եր հա-
րամ բան ամե-
նեին հուտել և
մի որ նա գնաց
գետի յեղը և
տեսավ, վոր ջու-
րը մի խնձոր եր
բերում: Յերի-

տառարդն առավ և խնձորը կերավ: անոթի, ապա
միտն ընկավ իր ուխտը և խղճմտանքով խնաց
գետն ի վեր, գտավ մի այգի և իմացավ, վոր
խնձորն այդ այգուց եր: Յերիտառարդն ասաց
այգետիրոջ. «Վողորմիր ինձ և առ խնձորի գինը

կամ հալալ արա, վորովհետև յես հարամ բան
ամենեւին չեմ կերել: Յեւ ըուրաստանի տերն
ասաց. «Կեսը, վոր իմն ե, հալալ քեզ և կեսը՝ իմ
յեղբորն ե, նրան տեր չեմ: Յեւ իմ յեղբայրը
հեռու յե այստեղից վեց որվա ճանապարհ: Յեւ
յերիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն
մարդուն, ասաց. «Կամ առ քո կես խնձորի գի-
նը և կամ հալալ արա ինձ»: Յեւ մարդն ասաց.
«Վոչ գինը կառնեմ և վոչ հալալ կանեմ: Թե
կուզես, վոր հալալ անեմ, յես մի աղջիկ ունեմ՝
վոր վոչ ականջ ունի և վոչ լեզու և վոչ ձեռք
և վոչ վոտք, նրան քեզ կին առ, վոր հալալ ա-
նեմ»:

Յերիտասարդն անճարացած առավ այդ աղ-
ջըկան և յերբ առագաստ մտան, տեսավ վոր
աղջիկը ամենեւին առողջ էր: Յեւ յերիտասարդն
աներոջն ասաց, թե ինչո՞ւ եյիր ծաղրում քո
աղջկան: Յեւ նա ասաց. «Յես ճշմարիտ եյի, վո-
րովհետև ծնված որից իմ աղջիկ արեգակի լուսը
յերգից ե տեսել և ոտար մարդու ձայն չի լսել
և ոտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շո-
շափել և վոտքը դռնից դուրս չի դրել: Յեւ յես
քեզ նման հալալ մարդ եյի ուզում և ահա դու
յեկար»:

ԱՌԹՈՒԾ ՅԵՎ ՄԱՐԴ




Ի դորավոր առյուծ
նստել եր ճանա-
պարհին և տեսակ
տեսակ գազաններ
այդ ճանապարհով
գալիս եյին դողա-
լով և անցնում:
Առյուծը հարցրեց
նրանց. «Ինչո՞ւ յեք
փախչում և ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում»:
Յեւ նրանք ասացին. «Փախի՛ր և դու, վորովհե-
տև ահա գալիս ե մարդը»: Յեւ առյուծն ասաց.
«Ո՞վ ե մարդը և ի՞նչ ե նա և ի՞նչ ե նրա ուժը և
նրա կերպարանքը, վոր փախչում եք նրանից»:

Յեկ նրանք ասացին. «Կգա, կտեսնի քեզ և քեզ վաճ կլինի»:

Յեկ ահա յուր հանդից յեկավ մի հողագործ մարդ, Յեկ առյուծն ասաց. «Միթե դու յես այն մարդը, վոր փախցնում ե գաղտնիքին»: Յեկ նա ասաց. «Այո, յես եմ»: Առյուծն ասաց. «Արի կալենք»: Մարդն ասաց. «Այո, բայց քո ղենքերը քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են: Յեկ նախ կապեմ քեզ, վորպեսզի չփախչես, մինչև յես գնամ առնեմ իմ ղենքը և ապա կալենք»: Առյուծն ասաց. «Յերգվիր, կգաս և յես կլսեմ քեզ»: Մարդը յերգվեց և առյուծն ասաց. «Հիմա կապիր ինձ և ղնա շուտ ու դարձիր»: Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց կաղնու ճառին և ծառից կտրեց մի բլր և սկսեց դարկել առյուծին:

Յեկ առյուծը գոչեց. «Յեթե դու մարդ ես, ա՛վելի խիստ և անխնա զարկիր իմ կողերին, վորովհետև այս խելքին այդպես ե վայել»:

Մ Ո Ւ Կ Ն Յ Ե Վ Ո Ւ Ղ Տ




Ի մուկ հպարտացավ: Կորավ նրա իմաստությունը և նրա սիրտը լցվեց հպարտությամբ: Մուկը գնաց ուղտի մոտ և ասաց ուղտին. «Ինձ հրաման

տուր քո կնիակի մեջ բռն դնեմ և այնտեղ բնակվեմ»: Յեկ ուղտն ասաց. «Բեզ ֆուսս կլինի, վորովհետև հանկարծ կոխ կսամ քեզ և կմեռնես»: Մուկն ասաց. «Բո սմբակը կակուղ ե և ինձ ֆուսս չի լինի»: Ուղտն ասաց. «Բո արյունը քո գլու-

խը»։ Յեւ մուկը ուղտի կճղակի մեջ շինեց իր բունը։ Մի անգամ ուղտը ծանր բեռան տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց մուկին։ Յեւ մուկը ճչաց և նրա փորից դուրս յեկավ ճրագուն, վորովհետեւ մուկը գեր էր։

Այդ տեսնելով ուղտն ասաց. «Ահա, յեղբայր, հենց այդ էր նեղում քեզ, վոր դուրս յեկավ քո փորից»։

ԱՐՎԵՍՏ ԿՆՈՋ



Ի մարդ շրջում
եր յերկրե յեր-
կիր և կինն ինչ
հնար վոր աներ,
նա գրում եր
թղթի վրա։ Յ վ
նա յերեք մեծ
բռններ շինեց և

գեռեա գնում եր և թղթի վրա գրում կնոջ հնա-
րը, վորով կինը խաբում եր մարդուն։ Յեւ նա
մտավ մի քաղաք և քաղաքի դռան մոտ կար մի
խիստ հնարագետ կին և այդ կինը մարդուն ա-
սաց. «Բարի յեկար»։ Յեւ կինը մեծարեց նրան


և տուն տարավ, կարծելով, թե այն մարդը չառ
ունի կերպաս և վոսկի և արծաթ: Յերբ յերեկո
յեղավ, կինն ասաց այն մարդուն. «Բեռներդ քո
լոնչ և, գուցե իմ պետքերի համար մի բան առ-
նեմ»: Յեվ նա ասաց. «Վոչիւնչ չունեմ ծախու»: Յեվ
կինն ասաց. «Ապա այդ, վոր ունիս, լոնչ
ե»: Յեվ նա ասաց. «Կնոջ հնար ե. ինչ կին վոր
հնար ե արել, շրջել եմ և գրել և բարձել և յե-
կել եմ այստեղ, վոր ուրիշ հնար գրեմ»: Յեվ
կինն ասաց. «Բարի յեկար»:

Յեվ այն ժամանակ կինը կամեցավ բեռներն
այրել և հնարն իմացավ: Տան մեջ կար մի փուռ,
վոր կտաներ յերեք բեռ թուղթ և կինը բարկ
վառեց փուռը և ձուկ տապակեց և զրեց հյուրի
առաջ: Յեվ ինքը վեր կացավ, դռները պինդ
փակեց և խոստ բարձր ձայնով ճչաց հավար կան-
չելով և յեկան դրացիները սուսերներով և բի-
բերով և բաղխեցին տան դուռը: Յեվ կինն աս-
աց այն մարդուն. «Յեթե կամենում ես, վոր
քեզ սպանել չտամ, թղթերը տուր այրեմ փռի
մեջ, իսկ յեթե վոչ՝ կասեմ, վոր այս մարդը
բռնաբարեց ինձ և քեզ սպանել կտամ»:

Յեվ մարդը բեռները տվեց նրան և կինը յե-
րեք բեռն այրեց փռի մեջ և տան դռները բաց

անելով ասաց. «Քանի տարի յե իմ հորեղբոր
վորդին գնացել եր և ահա յեկավ և յես նրան
ձուկ տվի՝ դատելու և փուշը բլի մեջ մնաց և զո-
րով աղատվեց մահից»: Յեվ յեկան տեսան, վոր
ձուկը նրա առջևն եր և գնացին:

ԳԱՅԼ ՅԵՎ ԱՂՎԵՍ ՅԵՎ ԶՈՐԻ



ԱՅԼՆ և աղվեսն և ջորին յեղբայր յեղան և գնացին և յերբ սովեցին և լորսի չհանդիպեցին, ասացին. «Յեկեք ուտենք նրան, ով տարիքով փոքր է»:

Այսպես ասացին գայլը և աղվեսը, լորովհետև կամենում էին ջորուն ուտել: Յեվ գայլին հարցրին, թե Վժր տարվա գայլն էս և նա ասաց, թե յես այն գայլն եմ, լորին Նոյը տապանն առավ: Յեվ աղվեսն առաջ յեկավ և ասաց. «Ո՛ր,

դու տասը ազգով ինձանից փոքր ես, և յես այն աղվեսն եմ, լորին աստված ստեղծեց»։ Յեվ ջորին յեկավ և ասաց. «Իմ ծննդյան թվականը գրված է սմբակիս վրա. յեկեք, կարգացեք և տեսեք քանի տարեկան եմ»։ Յեվ յոտքը լարձրացրեց։ Աղվեսն ասաց գայլին. «Դիտեմ, լոր դու դպրոցում յեղել ես, արի դիրը կարդա»։ Յեվ գայլը հավատաց և գնաց կարդալու։ Յեվ ջորին ասաց. «Առաջ արի, լորովհետև գիրս մանց է»։ Յեվ նա առաջ գնաց և ջորին սաստիկ ուժով զարկեց գայլի ճակատին և ջախջախեց և գայլը գնաց կողկոնձալով։ Յեվ աղվեսն ասաց գայլին. «Արի մի տող ել կա, այն ել կարդա»։

Գայլն ասաց. «Յես ինչ գիտեյի գիրը. մենք լազգե ազգ մսագործ ենք և մսագործի վորդի»։

ԳՈՂ ՔԱՀԱՆԱ ՅԵՎ ԱՅՐԻ ԿԻՆ




Ի քահանա գո-
ղացաւ այրի
կնոջ կողմը և ա-
խոռը կապեց:
Յեւ կինն իմա-
ցաւ և քահանա-
յին ասաց. «Տեր
հայր, հասաւ իմ
մահւան ժամը.

փնանք ախոռ, վոր խոստովանեմ մեղքերս»: Յեւ
այն ժամանակ քահանան կողմը տարաւ ներսի
տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից յեկե-
ղեցի: Յեւ կինն ասաց. «Տեր հայր, վերջին խոս-
տովանությունը մահից առաջ պետք է անել

յեկեղեցում»: Յեւ քահանան կողմը բեմ բարձրա-
ցրեց և վարագույրը քաշեց նրա վրա: Յերբ
նրանք յեկեղեցին մտան և նստեցին, այն ժա-
մանակ կինը բարձրացրեց վարագույրը և կովին
ասաց.

«Ո՛վ գարշելի, յես քեզ կով գիտեյի և այժմ
քեզ հիվ արեց պատարագիչ, ասես ինձ»:



Ի մարդ տրտում
նստել եր քարի տակ
և քնեց մի սլահ և
զարթնեց և չեր ու-
ղում տուն դնալ:
Յեվ հանկարծ լի-
կան յերկու ճնճղուկ,
նստեցին քարի վրա
և մարդուն հարցրին,
թե ինչո՞ւ նա տրտում

է: Յեվ մարդն ասաց, վոր «Տրտում ե, վորովհե-
տե աղքատ ե»: Ծնճղուկներն ասացին. «Կխոստա-
նաս յերբեք չասել վոչ վոքի, յեթե քեզ վոսկու-
տեղ ցույց աւանք»: Յեվ մարդը խոստացավ և
յերգվեց և նրանք ասացին. «Այդ քարի տակ լոթ

կարաս վոսկի կա թաղած, հանիր և տուն տար
և յեթե ասես մեկին, թե վորտեղից ե վոսկին,
խկույն կմեռնես»: Յեվ մարդն ուրախացավ,
գնաց յուր տուն, բրին առաւ և գիշերով յեկավ
գաղտնի հանեց վոսկին և տարավ յուր տուն,
սկսեց փարթամանալ և շքեղ տներ շինել, ունե-
ցավ ձիեր և ջորիներ և յիգներ և վոչխարի հո-
տեր և այլ ամենայն ինչ, վոր վայել ե աշխարհ
սիրողին:

Յեվ մի որ յեզն ասաց մյուս յեզան, թե «Յես
լ՞նչ անեմ, վորովհետե ամեն որ անխնա լծում
են ինձ»: Եւր, վոր նրան մոտիկ եր, ասաց. «Վա-
ղը սուտ հիվանդ յեղիր և հազա: Յերբ այդ տես-
նեն, կխղճան և այլևս քեզ չեն լծի»: Յեվ այս
խելով մարդը ծիծաղեց և մշակներին ասաց, թե
այսօր չե վաղը, այսինչ նշան եւր հիվանդ յե-
զան տեղ լծեք: Մշակն առավոտյան եւր տարավ
և լծեց մինչև իրիկուն և յերբ տուն յեկավ, եւն
ասաց հիվանդ յեզան. «Վողորմելի յեղնուկ, դու
չդիտես, թե արտում ինչ եյին ասում. ասում
եյին, թե այն հիվանդ յեզը վաղը մորթենք, վոր
չսատկի»: Լսիր ինձ և վոտքի կաց և առողջ յե-
ղիր, գնա լուծդ քաշիր, վոր քեզ չմորթեն: Քեզ
համար ավելի լավ ե բանել, քան կյանքից

դրելվել»։ Այսպես ասաց եղբ, վորպես դի ալեւս նրան չտանեն լծելու, վորովհետեւ այդ որը շատ էր-աշխատել։ Յեւ այս լսելով մարդը նորից ծիծաղեց։

Այն ժամանակ նրա կիներն ասաց. «Ո՛վ մարդ, մենք աղքատ եյինք և հանկարծ հարստացանք և այսչափ ասլըանքի և բարիքի տեր յեղանք և ժամ առ ժամ կենում և ինքդ քեզ ծիծաղում ես, ինձ ինչո՞ւ չես ասում, թե վորտեղից ե այս ամենը և դու ինչու լիս ծիծաղում»։ Մարդն ասաց. «Ո՛վ դու կին, յեթե ասեմ, իսկույն կմեռնեմ. դրա համար չեմ ասում»։ Իսկ կինը հանդգնեց և ասաց. «Ճար չկա, պետք ե ասես»։ Իսկ նա չեր ուզում ասել, բայց կինը նրան խիստ նեղեց և ասաց. «Պետք ե վոր ասես ինձ, յեթե մեռնես ել։ Յեթե վոչ՝ յես ինձ կսպանեմ»։ Յեւ մարդն անձաբացաւ և ասաց. «Ո՛վ կին, հալատա ինձ, վոր առանց տարակուսանքի կմեռնեմ, թե վոր ասեմ և յերբ թույլ չես տալիս, յիրեք որ սպասիր, մինչև մատաղ անեմ, քահանաներին և աղքատներին կերակրեմ, ապա քեզ ասեմ և մեռնեմ»։ Յեւ չար կինը հաղիւ հանձն առաւ յերեք որ սպասել։ Յեւ մարդը մորթեց շատ վոչխարներ և գառներ և կանչեց քաղաքի քահանաներին, կար-

գաւորներին և աղքատներին և նստեցին ճաշի և մինչդեռ ուտում եյին և ըմպում, այն մարդն սպասում եր։

Յեւ մարդն ուներ շան լակոտ, վոր տան մեջ նստել եր լի տրտմությամբ և սգով և նույնիսկ արտասուք եյին թափվում նրա աչքերից։ Յեւ իսկույն հանկարծակի յեկաւ աքլորը հալաքտ և խրոխտաւով և ներս մտաւ և նրա հետ կային քսան-յերեսուն հաւ աջից և ձախից։ Շան լակոտն սկսեց աքլորին ասել. «Ո՛վ լիրբ և անաղուհաց, ի՞նչ ես խրոխտացել և տեսակ տեսակ ձայն ես հանում. չգիտես վոր մեր տերը վաղը յուր գաղտնիքը պիտի կնոջն ասի և մեռնի։ Իսկ դու լալու փոխարեն ուրախ ես»։ Աքլորն ասաց. «Զվերս ի վայր թե կմեռնի. յես վոր նրա ծառան եմ, քսան-յերեսուն կին ունեմ և նրանց զավթ եմ արել, իսկ նա չի՞ կարող մեկին իր հրամանքով պահել»։ Շան լակոտն ասաց. «Ի՞նչ անի անզգամ կնոջն»։ Աքլորն ասաց. «Յեւրբ ամենքը վեր կենան մատաղից, թող առնի յերեք չորս դալար փայտ, դուռը փակի և կնոջն ասի՝ արի քեզ լսեմ իմ գաղտնիքը և նրան բռնի մերկացնի և կապի մի սյունից և այնքան ծեծի նրա կողերին և այլ տեղերին, վոր վողջ տեղ

չմնա, ամենը կապուտկի և ասի, թե չար կին, լավ ե, վոր դու մեռնես, քան թե յես և դռնից հանելով նրան դուրս վարի, ասելով՝ գնա կորիւր, յես այլ կին կառնեմ և քեզ չեմ ուզում»:

Յեւ աքլորից լսելով այս բարի խրատը, այն մարդը դարձյալ ծիծաղեց: Յեւ անողգամ կինը տեսնելով այդ, ամբոխի մեջ մոտեցավ նրան, չամաչելով վոչ մարդկանցից և վոչ քահանաներից և մարդուն ասաց. «Այժմ ինչո՞ւ ծիծաղեցիր, ասա ինձ և պատմիր, թե ինչպես հարստացար»: Յեւ մարդն աղաչեց. «Մի քիչ համբերի, թող հյուրերը գնան և յես քեզ ասեմ. այժմ ամոթ ե նրանց առաջ բան ասել»:

Յեւ յերբ ամենքը գնացին, ընտանիքը դուրս հանեց և դուռն ամուր փակեց և ըստ աքլորի խրատի ձեռքն առավ կնոջը, ջարդեց ամեն վռակորները և դուրս արեց: Իսկ կինը զղջալով նրա վրա՝ ընկավ լալով և աղաչում եր ասելով. «Աստուծո՛ւ սիրուն ինձ բան մի ասա և ամեն ուր ինձ այսպես ծեծի, միայն ինձ դուրս մի անի և քեզնից մի հեռացրու, վորպեսզի աշխարհում խաղք չլինեմ»:

Յեւ այսպես մահից ազատվեց մարդը աքլորի խրատով:

ԴՆԱԽՏ ՅԵՎ ԳԵՂՋՈՒԿ ՄԱՐԴ



Ի • Գեղջուկ մարդ աղը շալակին բարձրանում եր դժվար սարով և տոթ ժամանակ եր: Յեւ շատ հոգնեց մարդը և բեռը վայր դնելով սկսեց բամբասել Ադամին և Յեւ վայ ին, թե ինչո՞ւ

նրանք անհամբերությամբ դուրս յեկան դրախտից: Յեւ իսկույն յերևաց հրեշտակը և նրան ասաց. «Յեթե քեզ դրախտ տանեմ, դու կհամբերե՞ս»: Յեւ գեղջուկն ասաց. «Յերբ լինի այդ»: Յեւ հանկարծ քուն իջավ նրա վրա և տեսավ, վոր դրախտն ե ընկել և շատ ուրախացավ: Յեւ

ապա տեսավ, վոր դրախտի մեջ մարդիկ կտրա-
տում են դեռաբույս ծառերը և չհամբերելով ա-
սաց. «Այդ ի՞նչ մարդիկ եք, վոր չոր ծառերը
թողած, կտրատում եք կանաչ ծառերը»: Յեւ
աչքերը բաց արեց, տեսավ, վոր դարձյալ նստել
ե աղի բեռան մոտ և սկսեց դառն արտասվել:
Յեւ գեղջուկ մարդը նորից տեսավ հրեշտակին և
ասաց. «Այլևս չեմ խոսի»: Յեւ նա նորից դրախտ
ընկավ և տեսավ: Վոր մարդիկ կտրած ճյուղերը
և փայտը շալակ են կապել և չեն կարողանում
շալակել, բայց դեռ դարսում են ճյուղ և փայտ:
Յեւ չհամբերեց և ասաց. «Ո՛վ անխելքներ, թե-
թևացրեք ձեր բեռը, վոր կարողանաք շալակել»: Յեւ
գեղջուկ մարդը նորից զարթնեց դժվար սա-
րի վրա և սկսեց արտասվել և հրեշտակը յերրորդ
անգամ նրան դրախտ տարավ և նա տեսավ մի
մեծ քար, վորից կապել էյին տասներկու լուծ
յեզ և ամեն մեկը յուր կողմն եր քաշում և քարը
չեր շարժվում: Յեւ մարդը դարձյալ չհամբերեց
և կանչեց. «Ո՛վ հիմարներ, մի կողմի վրա քաշեք
և միասին քաշեք, վոր քարը տեղից շարժեք»:

Յեւ զարթնելով գեղջուկ մարդն ասաց. «Լավ
է յես իմ աղը շալակեմ»: Յեւ բարձրացավ դժվար
սարով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Արաքերեն Թարգմանության կողքին պետք է դնել վրացերեն Թարգմանությունը Վարդանի հատկապես այն ժողովածույի, վոր կոչվում է «Աղվեսագիրքը» (Ն. Մառ, «Ժողովածուք», էջ 574): Վրացերեն Թարգմանության հայտաբերումը պարտական ենք դիտնական Յե. Տակայիշվիլուն: Վրաց Թարգմանչի «Աղվեսագիրքը» ավելի մոտիկ է հայ ապագիր հրատարակության տեքստին, քան այն բնագրին, վորի վրա աշխատել է արաբ Թարգմանչի: Նույն էջի ծանոթության տակ Ն. Մառը դրում է, վոր ըստ Յե. Տակայիշվիլու յենթադրության «Աղվեսագիրքը» վրացերեն Թարգմանված է XIX դարում: Ն. Մառը յենթադրում է, վոր առաջին Թարգմանությունը կարող է յեղած լինել XVIII դարում: Այդ կապակցությամբ հետաքրքիր է նաև Ն. Մառի դիտողությունը «Աղվեսագրքի» և Սաբա Սուլիան Որբելիանու «Գիրք իմաստության և կեղծիքի» մասին, գրված 1719 թվից հետո, յերբ Որբելիանին վերադարձել էր Յեզրուպայից և «Աղվեսագրքն» արդեն չորս անգամ տպագրված էր, «գուցե և Թարգմանված վրացերեն»: (Ն. Մառ, § 54):

2. «Գարու հաշիվ».—Առական ունի մի քանի վարիանտ: Վերնագիրն է «Գողեռն և ավանակ և խողջ»: Ոգտվել ենք Ստեփաննոսի ժողովածույի մեջ յեղած վարիանտից: Առական քննվում է այսպես. «Ասի յոլոմբիական, Թէ այր մի կրէր

գրաստով...: Սակայն Վոլիմպիանոսի անվան հիշատակութ-
յունը դեռ ապացույց չէ, վոր սկզբնաղբյուրը նրա ժողո-
վածունն է: Մի վարիանտ ունի. առակի այսպիսի մեկնու-
թյուն. «Սոգերը մարմնասեր մարդիկ են և փափկասերները
և անդարձ մեղավորները և իշխանները. իսկ քուսակները՝
աղքատները»:

3. «Այրի կին յեվ վորդի».—Սկսվում է «ասի յառակաց»
բառերով: Այրին կաթը «խափ» է տալիս, վոր փոխադրել
ենք «հարեանին փոխ տալ»: Մեղանում մինչև վերջնա դեռ
մնում էր «խափ»-ի սովորությունը, ըստ վորի հարեաններն
իրար հերթով փոխ եին տալիս որվա կաթը՝ մի անգամ մե-
րան անելու համար:

4. «Միայնակյաց յեվ գամբո շուն».—Բնագրում միայ-
նակյացը զղջում է «և նույն ժամին պոռնկության դեռ
թողնում եր նրան, վորովհետև նա զղջաց»:

5. «Այծեր յեվ գայլեր».—Առակն ունի մի քանի վարի-
անտ նման է «Ապաղխարող դայլը» առակին, վոր դարձյալ
Վարդանի առակներից է: Մ. Մառը 1893 թվին, Արագածի
վրա պեղումների ժամանակ ձեռք է բերում մի ձեռագիր՝
1320 թվին Այդ ձեռագիրը մեջ կա այս առակը, զրված դի-
վանագլխական գրությունների բարձր վոճով. որինակ՝ գայ-
լերը, այծերին ուղղած իրենց թուղթն սկսում են այսպես՝
«Առ ամենիմաստ յերջանիկ աստվածասեր և այծերի սուրբ
ազգին գրում ենք մենք, դայլերի չարաբարո և մեղավոր և
լեբբ աղքատ»։ Նման առակ ունի նաև Յեզոպոսը:

6. «Յերկու նկարիչ».—Այս առակը գտնվել է Դավիթ

Ղրիմեցու ձեռագրի մեջ, Վարդան Այգեցու այլ առակներ
հետ, վորոնց սկզբում կան այս տողերը. «Այս առակները
հավաքեցի և գրեցի («ժողովեալ գրեցի») յես մեղավորս
Վարդան, մենակյացների ձորում իմ հոգևոր վորդիներ հա-
մար»։ «Ժողովեալ գրեցի»,—ճիշտ բնորոշումն է Վարդանի,
իրև առակագրի և նյութի, վոր մինչ այդ անգիր գրույց եր:

7. «Առյուծ յեվ աղվես».—Ունի նաև Յեզոպոսը: Լոհ-
մանն ունի «Նապաստակ և առյուծ» վերնագրով: Այս ա-
ռակն աննշան տարբերությամբ կա նաև սիրիական առակ-
ների ժողովածուների մեջ:

8. «Իմաստուն դասավոր».—Առակը սկսվում է «ասի ի
պատմությանց» բառերով: Բուն Վարդանի առակները մեջ
չկա: Վերագրվում է Վարդանին՝ Ստեփանոսի ժողովածույի
հիման վրա:

9. «Առյուծ յեվ գայլ յեվ աղվես».—Առակն ունի մի քա-
նի վարիանտ՝ տարբեր ժողովածուների մեջ: Նման առակ
ունի Յեզոպոսը, արաբական «Աղվեսագիրքը», սիրիական
առակների ժողովածուն: Յեզոպոսի մոտ գայլի փոխարեն
եղն է. կա առակի հայերեն մի վարիանտը, ըստ վորի արջն
է ստանում «առյուծի բաժինը»:

10. «Գիւնի».—Առակն անգամ հրատարակել է Դեվոնդ
վ. Հոֆմանյանը («Հանդես Ամսոյրյա», 1890, XI): Այս առա-
կը մեջ է բերված «Գիրք առակաց ասացեալ վարդապետին
Վարդանայ ի պէտս հողւոյ և մարմնոյ պիտանի» ձեռագիր
մատյանում, զրված 1617 թվին: Տեքստի լեզուն և վոճը ևս
վկայում են, վոր այս առակը Վարդանին վերագրել են հե-
տագայում:

11. «Իմաստուն ավագներ».—Այս առաին անհատն տարբերութեամբ կա թե Վարդանի ժողովածուները և թե «Բարոյախօսի» մեջ: Իմաստուն ավագները առակին կցված մեկնությունն ից հայտնի է անուամբ, թե «մարդկային ազգը փառասիրութիւնն ից և ազահոլութիւնն ից հիմաբանալով չի մտածում այն ահագին տանջանքի մասին, վոր նրան սպասուած է հետ այս կենաց»:

12. «Միամիտ գողեր».—Առակ Ստեփաննոսի ժողովածուներէն է: Մառի՝ ժողովածուն կազմողին ծանոթ է յեղել «Աղվեսաղիբը» անունը: (հիշեցեք... Ստեփաննոս վարդապետին, վոր ժողովողին խրատելու համար գրել տվեց առակներ, վորոնց մեջ աղվեսը մարդկանց ոգուտի համար է): Ընդունելով, վոր «գրել տվեց» («ետ գրել») կնշանակի արտագրել տվեց,—կարելի չէ յենթադրել, վոր գոյութիւն է ունեցել անհայտ մի ձեռագիր, վորից Ստեփաննոսի պատկերով 1669 թվին կազմել են այս նոր ժողովածուն:

13. «Յեղեգն յեվ ծառեր».—Ըստ մի վարիանտի՝ «Թագաւորն հնդկաց ել ի դքսոսանս զրջել...»: Այդ հիման վրա կարելի չէ ասել, վոր հայկական այս առակը համառոտումն է արևելյան առակի (Ն. Մառ): Նման սյուսթե հայտնի երդեռ ևս Սոփոկլեսին՝ Վարդանին վերագրած ամենահին ժողովածուների մեջ այս առակը մեջ է բերված հետևյալ մեկնութեամբ. «Ցուցանե առակս, թե պարտ է սիրել խոնարհութիւն, հեզութիւն և համբերութիւն և հնազանդիլ: Զատերն են սատակել հպարտութեամբ: Ավելորդ է ասել թե ինչ հնազանդութիւն եին պահանջում յեկեղեցու ներկայացուցիչները հալածողալ հոտից»:

14. «Իգիսան յեվ այրի կից».—Այս առակը վերագրել են Հովհան Ծործորեցուն: Ն. Մառը հավանական հեղինակ համարում է Մխիթար Գողին: Այն սակավաթիվ առակներն է, վոր զերծ են քննարկ բարոյախօսական մեկնութիւնն: Առակն ունի միայն մի վարիանտ՝ Հովհան Ծործորեցուն վերագրած՝ «Գարոգորբի» մեջ:

15. «Թագավոր յեվ ոճ».—Հրատարակել է Զ. Վ. Հովնանյանը, 1890 թ. Նման սյուսթե ունի նաև «Կալիլա և Դիմնա»-ն: Դրանով պիտի բացատրել, վոր հայերեն տեքստը՝ «Թագավոր և ոճ և վորդի թագավորին» սկսվում է «ասի խառկաց» բառերով: Բացի Ամատեղամի «Աղվեսաղբի» (1668) վարիանտից, կան և հայերեն այլ վարիանտներ: Մենք հիմք ընդունել ենք Ստեփաննոսի ժողովածուի վարիանտը, վոր ավելի կենդանի լեզվով է և ընդարձակ: Այդ առակը վերջանում է հետևյալ խրատով. «Հին թշնամին նոր սիրելի չի լինիր և ճար չկա, վոր այլ լինի. ով միտս ունի, իմաստը»:

16. «Առյուծ յեվ աղվես յարջ».—Առակը հայտնի չէ չորս վարիանտով: Առակի վերջի դեհհիւթիւնները կրճատել ենք: Նման առակ ունի նաև Յեզոպոսը, այս տեքստը Ն. Մառը հետևյալ միտքն է հայտնել. «Հայկական տեքստը հաճախ ներկայացնում է հուշարեկուն անհայտ իմբագրութիւն և այս դեպքում հայ այլաբանական գրականութիւնը մեզ համար կարող է պահած լինել Յեզոպոսի առակի կորած վարիանտը» (Ն. Մառ, 478):

17. «Կար մեղու պանծառ պանծաղմի».—Ձեռագիր ենք նաև իբրև սկզբնաղբյուր Հովհ. Թումանյանի «Մի կտթիլ մեզրի»: Ավելի սեզմ ունի «Պանչանտրա» սանսկրիտ մաս-

այանը, ըստ վորի վորսորդն է գտնում մեղքի խորխորը և ուզում է ծախել, մի կաթիլ կաթում է գետնին և այլն: Անհավանական համարելով սանսկրիտից անմիջապես հայերենի փոխադրելը, Ղ. Վ. Հոֆմանյանը յենթադրում է, վոր արաբ թարգմանությունից է մտել Վոսկեսփորիկի և Վարդանի առակների ժողովածուների մեջ: Ըստ Ն. Մառի՝ «Աղվեսագրքի» մեջ անցել և «Կալիլա և Դիմնա»-յից:

18. «Կասկ վասն գանձի».—«Ցուցանե առակս, թե աշխատանքը մեծ բարիք է և շատ ոգուտ թե այս և թե այն կյանքում»: Ամենատարածված առակներից մեկն է մեզանում և մինչև այժմ, մանավանդ այդեզործական շրջաններում, պատմում են, ակնարկելով այդին խոր փորելուց ստացվող ոգուտը՝ առակի գանձը:

19. «Ուղտ յեվ գայլ յեվ աղվես».—Այս առակն ունի մի քանի խմբագրություն, տարբեր բարոյախոսական մեկնություններ: Այսպես, ըստ մի վարիանտի՝ «ցուցանե առակս, թե աղքատը չպետք է ձգտի մեծատան հետևից և վոչ ել կովի մտնի նրա հետ»: Մյուսի մեկնությունը՝ «ցուցանե, թե մեծատունները և առաջնորդները ծծում են ժողովրդի ուղիղը և շատերն են աղքատանում»: Տարբեր սոցիալական խավեր նույն առակը մեկնել են՝ յուրաքանչյուրն ըստ յուր աշխարհայեցողության: Մեծատունները և յեկեղեցին զարոգել են, վոր աղքատը չպիտի կովի նրանց դեմ և պիտի հաշտվի իր վիճակին: Իսկ աղքատն արդեն գիտակցել էր, վոր մեծատունները և հոգևոր առաջնորդներն են յուր թշվառության պատճառը:

20. «Յեզն յեվ ձի».—Առակն արտացոլում է սոցիալական անհավասարության գիտակցությունը դյուղացիական

խավերում՝ վաղնջական ժամանակ և նրանց բողոքը: Փետրվարյան դեմ: Այս կարգի առակ է նաև «Յեկեղեցին և ջրաղացը», վորով յեկեղեցին համարվում է պորտաբույս և «ջրաղացը», այսինքն դյուղացիության քրտինքով ապրող Առաջին առակի մեկնությունը՝ «ցուցանե առակս, թե մարդ կա, վոր աշխատում է յեզան նման և մարդ կա, վոր: միշտ ձի յե հեծնում և ավերում է աշխարհը Յեվ յեթե աշխատավորը յեզան նման չաշխատի, ապա կմեռնի ձին և ձիատավորը յեզան նման չաշխատի, ապա կմեռնի ձին և ձիատավորը»: այս մեկնությունն ապացույց է այդ գիտակցության դարձման, և դեռևս յերկար ժամանակ այդ առակն ավանդվել է, ինչպես հաստատում է աստապագայիներից զրի առած նույն առակի հետևյալ վարիանտը. (Նավասարդյան, Հայ ժող. հեք., 7):

«Վոսկես թամբով ձին բեռնած յեզան ասավ.

«—Յես ձի ամ ձիավորին

«Վոսկես արթո ամ թագավորին.

«Յեզն ասավ.

«—Յես յեզ ամ յեզնավորին

«Վոսկես արթո ամ ուրլարին.

«Յես յգտեմ արտն ու զարին

«Հաղողանին պոխիդ տակին կարվին:

21. «Հիմար յեվ ձմեռուկ».—Մի վարիանտն ունի «ասի առակաց» ձևը, վորից կարելի յե յենթադրել առակի մուտքը հայերեն ժողովածուների մեջ՝ զբաղվոր այլ աղբյուրից: Մխիթար Գոշն ունի այսպիսի առակ, բովանդակությամբ մի քիչ տարբեր (անփորձ մարդը նեխն ընդունում է ջայ-լամի ձվի տեղ և այլն): Հայ ժողովրդական բանահյուսությանը հայտնի յեն նման առակներ և ասացվածքներ:

22. «Աղվես յեվ ավեսարան».—Մի ձեռագրի մեջ՝ «Աղբատ և յերեց և ավետարան»: Կազմել ենք յերկու վարիան-

տից: Բնագրում առաջին այսպես չի վերջանում. ըստ մեկի՝ «քահանան ամութալի յեղա՛վ», իսկ ըստ մյուս վարիանտի՝ «աղքատը քահանային մեկնաբանում է ավետարանի նշանակութիւնը, ինչպես մի շերմեռանդ հավատացյալ: Այդ մասը համարելով բարոյախոսական կցան, վոր վարպետութեամբ ժամանակին միացրել են առակին,—գատել ենք բուն առաջից:

23. «Հայր վորդի».—Բնագիրը չունի «և այժմ դո՛ւ յես խրատում ինձ» բառերը: Առակը վերջանում է հոր խրատով՝ ամուսնութիւնը «սրբութեամբ դրծելու մասին»:

24. «Մառդ յե՛վ բնկույզ յե՛վ ձմեռուկ».—Աննշան տարբերութեամբ այս առակը կա մի քանի ժողովածուներէ մեջ:

25. «Յեկեղեցի յե՛վ ջրաղաց».— Տես ծան. 20: Առակին կցված է հետևյալ մեկնութիւնը: «ցուցանե առակս, թե կան աշխարհի մարդիկ, վորոնք միշտ աշխատում և դատում են, ինչպես մեղու. և թագավորները և իշխանները և ամենայն մարդիկ ուտում են նրանց վաստակը և օպտ յեկեղեցի դնելով աղոթում են աստծուն և հիշում»:

26. «Ամեհնացեա մարդ».— Սկսվում է «ասի յառակաց» բառերով: Արեւելյան ծագումն աւանդում է:

«Ջրմի և թոնի» մարդ (մի ձեռագրում՝ «ջմրի և նոթի») կարելի չէ հասկանալ իբրև «ջրմուռի և թոնի մարդ».— խիստ ծաբով և թաթով մարդ: Գուցէ աշխարհում է այդպիսի մարդու անկարելիութիւնը և ուրեմն հովիվը ծաղրում է թագավորի գիտուններին: Կարելի չէ հասկանալ, վոր հենց ինքը՝ ամեհատեղեմը՝ արտասովոր մարդ եր' և խիստ ծաբով և թաթով ու թաց:

27. «Ազգես յե՛վ վորսորդ».— Բնագիրը՝ «Աղուէս և որսորդը», աղվեսին հալածում են վորսորդները: Աղվեսը կարծում է, վոր իրեն ուզում են նշանակել «ձիտանոցի հայրապետ»: Աղվեսի բերանով առակագիրը ծաղրում է վանահայրերին և յեկեղեցականներին ընդհանրապես:

28. «Իօխանավոր յե՛վ իմասուն».— Յերկու վարիանտն ունեն «Մելիք և կարդացող» վերնագիրը, թեև տեքստի մեջ սուլթանն է, վոր դադիկից ֆեթվա է ուզում ամուսնութեան համար: Առակը նաև ծաղր է բազմակնութեան սովորութեան: Խմբագրելու ընթացքում դուրս ենք թողել այդպիսի բառերը: Առակը վերջանում է սուլթանի գղջումով («և եկեալ սուլտայն ի գղջում»): Այդ մասը չենք թարգմանել, իբրև առակի միտումնավոր վերջավորութիւն, վորի նպատակն և ցույց տալ կրօնի գորութիւնը:

29. «Ազգես յե՛վ քրթաօտ գայլ».— Ոգտվել ենք Ամստերդամի «Աղվեսագրքի» վարիանտից, վորի վերջը տարբեր է և թույլ: Յերբ գայլն ընկնում է շներէ բերանը, աղվեսին խնդում է բերել թուղթը: Աղվեսը հեռվից կանչում է. «Ո՛վ գայլ, այդ գյուղում կարդացող չկա, լսող չկա. ինչ կա վոր թուղթը բերեմ»: Յե՛վ շները գայլին սպանում են: Ավելի հաջող համարելով առաջին վարիանտի վերջը, մենք այն կցել ենք Ամստերդամի «Աղվեսագրքի» վարիանտին:

Առաջին վարիանտը վերջանում է հետևյալ իմաստութեամբ, վոր բերում ենք առանց թարգմանելու. «ցուցանե առակս, թե մի վիճիր է մի անկանիւր ի մէջ վիճողաց և բազում տգիտաց և անբրկեղաց, այլ իմաստութեամբ փաթիր ի դիւաց և ի նոցին կամակառարաց և յանիւրաւաց»:

30. «Հալալ մարդ».—Առակից հանել ենք հետևյալ նախադասութիւնները: «Զի գրած է ի հաքմաթն, թէ յանօթէց զխնծորն ուտելն դաւուրն տրտմութիւն տանի»։ Նաև՝ «Է աստուած էրես ինձ և ուրախացեալք յոյժ և փառս ետուն աստուծոյ»։ Վերջին նախադասութիւն տեղ ավելացրել ենք: «Է ահա դու յեկար»:

31. «Առյուծ յեկ մարդ».—Այս առակի մասին Ն. Մառը գրել է. «Առակն ունի յերեք խմբագրութիւն, վորոնցից մեկի համար բնորոշ են ժողովրդական ձևերը և դարձվածքները և ավելի մանրամասն ե... Մեզ համար միանգամայն հովանական և Յեզոսյոսի առակի հունական տեքստի դոյութիւնը, միանգամայն համապատասխան հայկական վերսիային» (Ն. Մառ, 483): Մենք հիմք ընդունել ենք «Ժողովրդական ձևերով» հարուստ վարիանտը:

32. «Արվեստ կնոջ».—Բնագրում՝ «Արուեստը կնոջ»։ Այս մանրավեպի մեկնութիւնը գրված է «գեղջուկ բառով», վոր բերում ենք ընթերցողին ծանոթացնելու այդ լեզվին. «Յուցանե առակս, թե մարդ հետ ֆելվոր կնոջ հուն վոչ կարե ֆեներ (էի հուն ելանել=գլուխ հանել)»։ Ա. Բ.), վորպես ասին գեղջուկ բառով, թե կնկայն ֆեն բռնելով է և հաղթե մարդկան. և մարդ վոչ կարե դիմանալ կնկայն ֆելին»...

33. «Անգգամ կին».— Այս մանրավեպի սկիզբը՝ ուր պատմվում է ծովային թաղավորի և մարդու բարեկամութեան մասին և թե ինչպէս այդ մարդը սովորում է կենդանիներ լեզուն՝ կրճատել ենք և ավելացրել հետևյալ պարբերութիւնը. «Յեկ մարդուն հարցրին թե ինչո՞ւ նա տըր-


տում նստել եւ Յեկ մարդն ասաց, վոր տրտում է, վորովհետեւ աղքատ եւ Մտերն ասացին. «Կխոստանամ յերեք չասել վոչ վորի, յեթե քեզ վոսկու տեղ ցույց տանք» և մարդը խոստացավ և յերդվեց և ծտերն ասացին. «Այդ քարի տակ յոթ կարաս վոսկի կա թաղած, հանի և տուն տար և յեթե ասես մեկին, թե վորտեղից է վոսկին, իսկույն կըմեռնես»։ Յեկ մարդը ուրախացավ»...

34. «Դրախտ յեկ գեղջուկ մարդ».—Կոչվում է «Գրեթե տոնյա և ալազգի, այլ և օրինակ վիճի յաղաղս հաւատոյ», վորի մեջ «ալազգին» պատմում է մի «օրինակով բան», վորի վերնագիրն է «Աղն կսկծի»։ Վորովհետեւ Ամատերդամի «Աղվեսաղբի» մեջ կար այդ առակն առանց ներածութեան և ավելի գրավիչ (տես նաև Դ. Վ. Հովսեփյան, «Հետազոտ. նախնայաց ռամկօրէնի վրայ», մասն Ա., տետր Բ., 282)։— մենք գերադասեցինք այդ վարիանտը, վերամշակելով առակի վերջին մասը:

Յ Ա Ն Կ

Նախաշավիկ Ա. Բակունց	62
Գարու հաշիվ	7
Այրի կին և վորդի	23
Միայնակաց և դամբու շուն	25
Այծեր և դայեր	27
Յերկու նկարիչ	29
Առյուծ և աղվես	31
Իմաստուն դատավոր	33
Առյուծ և դայլ և աղվես	34
Գինի	36
Իմաստուն ավագիչ	38
Միամիտ գողեր	40
Յեղեգն և ծառեր	42
Իշխան և այրի կին	44
Իմաստուն զինվոր	45
Թագավոր և ոձ	47
Առյուծ և աղվես և արջ	48
Կաթ մեղու պատճառ պատերազմի	50
Կտակ վասն դանձի	52
Ուղտ և դայլ և աղվես	54
Կռունկ՝ Թագավոր Թռչունների և եղ	56
	58

Յեղն և ձի	80
Հիմար և ձմերուկ	81
Եշին թռռ ծնվեց	83
Աղքատ և ավետարան	84
Հայր վորդի	86
Մարդ և ընկույզ և ձմերուկ	87
Յեկեղեցի և ջրաղաց	89
Ամենատղետ մարդ	70
Աղվես և վորսորդ	75
Իջևանավոր և իմաստուն	76
Աղվես և թղթատար դայլ	78
Այրի կին և խորթ վորդի	80
Հալալ մարդ	81
Առյուծ և մարդ	83
Մուկն և ուղա	85
Արվեստ կնոջ	87
Գայլ և աղվես և ջորի	90
Գող քահանա և այրի կին	92
Անդգամ կին	94
Դրախտ և գեղջուկ մարդ	99



ԱՅՍ ԳԻՐԵԸ ԿԱԶՄԵԼ

Ե ԱԿՍԵԼ ԲԱԿՈՆՅԸ:

ՆԿԱՐԱԶԱՐԴԵԼ Ե

ՀԱԿՈԲ ԿՈՂՈՅԱՆԸ:

ՏՊՎԱԾ Ե ՊԵՏՀՐԱՏԻ

ՏՊԱՐԱՆՌՄՅԵՐԵՎԱՆԵ

ՀԱԶԱՐ ԽՆԸ ՀԱՐՑՈՐ

ՅԵՐԵՍՈՒՆԿՆԳ ԵՎԻՆ



Զեյնալյան
1936 թ. - Զեյնալյան

Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբազրիչ՝ Ո. Դասաբլյան
Գիրքը արեց Ա. Կոդաբաշյան



Պ Ե տ հ ր ա տ ի տ ա ղ ա լ ա ն
Դ ր ա Վ ի խ 102, Պ ա տ Վ ե ռ 902
Հ ր ա տ. 3976, Տ ի Ր ա Ք 10400



ՀՀ Ազգային գրադարան



NL0368747

56.833